

Սույն փաստաթուղթը միայն փաստաթղթային գործիք է, և հաստատությունները դրա բովանդակության համար որևէ պատասխանատվություն չեն կրում

►B

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԱՌԼԱՄԵՆՏԻ ԵՎ ԽՈՐՀՐԴԻ 1995 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի  
95/46/ԵՀ ՀՐԱՀԱՆԳ

Անհատական տվյալների մշակման և այդ տվյալների ազատ տեղաշարժի  
առնչությամբ անհատների պաշտպանության մասին

(ՊՏ L 281, 23.11.1995թ., էջ 31)

Փոփոխված՝

Պաշտոնական տեղեկագիր

|            |                                                                                             | No    | էջ | ամսաթիվ    |
|------------|---------------------------------------------------------------------------------------------|-------|----|------------|
| <b>"M1</b> | Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2003 թվականի սեպտեմբերի 29-ի թիվ 1882/2003 (ԵՀ) կանոնակարգով | L 284 | 1  | 31.10.2003 |

**ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԱՌԼԱՄԵՆՏԻ ԵՎ ԽՈՐՀՐԴԻ 1995 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի  
95/46/ԵՀ ՀՐԱՀԱՆԳ**

**Անհատական տվյալների մշակման և այդ տվյալների ազատ տեղաշարժի առնչությամբ  
անհատների պաշտպանության մասին**

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԱՌԼԱՄԵՆՏԸ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ,

հաշվի առնելով Եվրոպական համայնքի հիմնադրման մասին պայմանագիրը և,  
մասնավորապես, դրա 100-րդ հոդվածը,

հաշվի առնելով Հանձնաժողովից ստացված առաջարկը ( 1 ),

հաշվի առնելով Տնտեսական և սոցիալական հարցերով կոմիտեի եզրակացությունը (2),

գործելով Պայմանագրի 189-րդ հոդվածով նախատեսված ընթացակարգին  
համապատասխան ( 3 ),

1) քանի որ Համայնքի նպատակները, Պայմանագրով նախատեսված կարգով,  
Եվրոպական Միության մասին պայմանագրով նախատեսված փոփոխությունների  
համաձայն, ներառում են Եվրոպայի ժողովուրդների միջև առավել սերտ միություն  
ձևավորելը, Համայնքին պատկանող պետությունների միջև սերտ հարաբերությունները  
խթանելը, տնտեսական և սոցիալական առաջընթացն ապահովելը Եվրոպան  
մասնատող պատերազմները վերացնելու միասնական ուժերով, դրա բնակչության  
կենսապայմանների շարունակական բարելավումը խրախուսելը, անդամ  
պետությունների սահմանադրություններով ու օրենքներով, ինչպես նաև «Մարդու  
իրավունքների ու հիմնարար ազատությունների պաշտպանության մասին»  
Եվրոպական կոնվենցիայով ճանաչված հիմնարար իրավունքների հիման վրա  
խաղաղությունը և ազատությունը պահպանելը ու ժողովրդավարությունն ամրապնդելը,

2) քանի որ տվյալների մշակման համակարգերը նախատեսված են մարդուն ծառայելու  
համար, և քանի որ դրանցով պետք է, անկախ ֆիզիկական անձի ազգային

պատկանելությունից կամ բնակության վայրից, հարգել նրանց հիմնարար իրավունքներն ու ազատությունները, մասնավորապես՝ գաղտնիության իրավունքը, նպաստել սոցիալ-տնտեսական առաջընթացին, առևտրի ընդլայնմանը և անհատների բարօրությանը,

- 3) քանի որ ներքին շուկայի ձևավորումը և գործառնությունը, որում Պայմանագրի 7ա հոդվածի համաձայն, ապահովվում է ապրանքների, անձանց, ծառայությունների և կապիտալի ազատ տեղաշարժը, պահանջում են ոչ միայն անհատական տվյալների ազատ արտահոսքի հնարավորություն մեկ անդամ պետությունից մյուսը, այլ նաև անհատների հիմնարար իրավունքների երաշխավորում,

,

- 4) քանի որ Համայնքում ավելի հաճախակի է անդրադարձ կատարվում անհատական տվյալների մշակմանը տնտեսական և սոցիալական գործունեության տարբեր ոլորտներում, և քանի որ տեղեկատվական տեխնոլոգիաներում արձանագրված առաջընթացը զգալիորեն հեշտացնում է այդ տվյալների մշակումն և փոխանակումը,

- 5) քանի որ Պայմանագրի 7ա հոդվածի իմաստով ներքին շուկայի ձևավորումից ու գործառնությունից բխող տնտեսական և սոցիալական ինտեգրացիան անկասկած կհանգեցնի անդամ պետություններում տնտեսական և սոցիալական գործունեություն իրականացնող մասնավոր կամ հանրային կառույցներում բոլոր ներգրավվածների միջև անհատական տվյալների միջսահմանային արտահոսքերի զգալի ավելացմանը, և քանի որ տարբեր անդամ պետություններում գործող ձեռնարկությունների միջև անհատական տվյալների փոխանակման դեպքերն ավելանում են, և քանի որ տարբեր անդամ պետությունների ազգային մարմիններին Համայնքի իրավունքով կոչ է արվում համագործակցել և փոխանակել անհատական տվյալներն այնպես, որ նրանք կարողանան կատարել իրենց պարտականություններն ու առաջադրանքներն ի շահ մեկ այլ անդամ պետությունում գործող մարմնի՝ ներքին շուկայի շրջանակներում ձևավորված առանց ներքին սահմանների տարածքի համատեքստում,

- 6) քանի որ, ավելին, գիտական և տեխնիկական համագործակցության խորացումը և հեռահաղորդակցության նոր ցանցերի համակարգված ներմուծումը Համայնք առաջացնում է անհատական տվյալների միջսահմանային արտահոսքերի անհրաժեշտություն և հեշտացնում դրանք,

- 7) քանի որ անհատների իրավունքների և ազատությունների մասնավորապես՝ գաղտնիության իրավունքի, պաշտպանության մակարդակում առկա տարբերությունները՝ անդամ պետությունում վերապահված անհատական տվյալների մշակման առնչությամբ, կարող են կանխել այդպիսի տվյալների փոխանցումը մեկ անդամ պետության տարածքից մյուս անդամ պետության տարածք, և քանի որ այդ տարբերությունները, հետևաբար, կարող են խոչընդոտել տնտեսական գործունեության մի շարք տեսակների իրականացումը Համայնքի մակարդակում, խաթարել մրցակցությունը և խոչընդոտել պետական մարմիններին կատարելու Համայնքի իրավունքով նախատեսված իրենց պարտականությունները, և քանի որ պաշտպանության մակարդակում առկա այդ տարբերությունները պայմանավորված են ազգային օրենքների, կանոնակարգերի և վարչական ակտերի լայն բազմազանությամբ,

- 8) քանի որ անհատական տվյալների արտահոսքի խոչընդոտները վերացնելու համար անհատների իրավունքների և ազատությունների պաշտպանության մակարդակը՝ այդպիսի տվյալների մշակման առնչությամբ, պետք է համարժեք լինի բոլոր անդամ պետություններում, և քանի որ այդ նպատակը կենսական նշանակություն ունի ներքին շուկայի համար, սակայն չի կարող իրագործվել առանձին անդամ պետության կողմից՝ հատկապես հաշվի առնելով անդամ պետությունների համապատասխան օրենքներում առկա ներկայիս հակասությունների ծավալը և անդամ պետությունների օրենքների համակարգման անհրաժեշտությունն այնպես, որ ապահովվի անհատական տվյալների միջսահմանային արտահոսքի կարգավորումը հաստատուն կերպով, այն է՝ ներքին շուկայի նպատակներին համապատասխան, ինչպես որ նախատեսված է Պայմանագրի 7ա հոդվածով, և քանի որ, հետևաբար, առկա է այդ օրենքները համապատասխանեցնելու՝ Համայնքի գործունեության անհրաժեշտությունը,

9) քանի որ, ազգային օրենքների համապատասխանեցման և դրանից բխող համարժեք պաշտպանության դեպքում, անդամ պետություններն այլևս չեն կարողանա անհատների իրավունքների և ազատությունների, և, մասնավորապես՝ գաղտնիության իրավունքի, պաշտպանության հիմքերով խոչընդոտել իրենց միջև անհատական տվյալների ազատ տեղաշարժը, և քանի որ անդամ պետություններին կտրվի մանևրելու որոշակի հնարավորություն, որը, սույն Հրահանգի կիրարկման համատեքստում, կարող է իրականացվել նաև գործարարական և սոցիալական գործընկերների կողմից, և քանի որ անդամ պետություններն այդպիսով հնարավորություն կունենան իրենց ազգային իրավունքում սահմանել տվյալների մշակման օրինականությունը կարգավորող ընդհանուր պայմանները, և քանի որ, այդպես վարվելով, անդամ պետությունները կձգտեն բարելավել իրենց գործող ազգային օրենսդրություններով նախատեսված պաշտպանությունը, և քանի որ մանևրելու նշված սահմանների շրջանակներում և, Համայնքի օրենսդրության համաձայն, կարող են ի հայտ գալ հակասություններ սույն Հրահանգի կիրարկման ժամանակ, իսկ դա կարող է անդրադառնալ անդամ պետություններում ինչպես նաև Համայնքում տվյալների տեղաշարժի վրա,

10) քանի որ անհատական տվյալների մշակման մասին ազգային օրենքների նպատակը մարդու հիմնարար իրավունքների և ազատությունների, մասնավորապես՝ գաղտնիության իրավունքի, պաշտպանությունն է, ինչը հաստատվել է ինչպես «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին» եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածով, այնպես էլ Համայնքի իրավունքի ընդհանուր սկզբունքներով, և քանի որ այդ պատճառով այդ օրենքների համապատասխանեցումը չպետք է հանգեցնի իրենց կողմից տրամադրված պաշտպանության նվազեցմանը, այլ հակառակը՝ Համայնքում ապահովի պաշտպանության ավելի բարձր մակարդակ,

11) քանի որ անհատների իրավունքների և ազատությունների, մասնավորապես՝ գաղտնիության իրավունքի պաշտպանության սկզբունքները, որոնք ամրագրված են սույն Հրահանգում, էական նշանակություն են հաղորդում և ամրապնդում են «Անհատական տվյալների ավտոմատ մշակման առնչությամբ անհատների պաշտպանության մասին» 1981 թվականի հունվարի 28-ի Եվրոպայի խորհրդի կոնվենցիայով ամրագրված սկզբունքները,

12) քանի որ պաշտպանության սկզբունքները պետք է կիրառվեն ցանկացած այնպիսի անձի կողմից անհատական տվյալների մշակման բոլոր տեսակների նկատմամբ, ում գործունեությունը կարգավորվում է Համայնքի իրավունքով, և քանի որ պետք է բացառվի տվյալների մշակումը ֆիզիկական անձանց կողմից զուտ անձնական կամ կենցաղային նպատակներով, ինչպես օրինակ՝ թղթակցության կամ հասցեները հաշվառելու համար,

13) քանի որ «Եվրոպական միության հիմնադրման մասին» պայմանագրի V և VI բաժիններում նշված գործունեության այն տեսակները, որոնք վերաբերում են հանրային անվտանգությանը, պաշտպանությանը, պետական անվտանգությանը կամ քրեական օրենսդրությամբ կարգավորվող ոլորտում պետության գործունեության տեսակներին, չեն մտնում Համայնքի իրավունքի գործողության ոլորտի մեջ՝ չհակասելով անդամ պետությունների վրա՝ «Եվրոպական համայնքի հիմնադրման մասին» պայմանագրի 56(2), 57 կամ 100ա հոդվածներով դրված պարտավորություններին, և քանի որ անհատական տվյալների մշակումը, որն անհրաժեշտ է պետության տնտեսական բարեկեցությունը երաշխավորելու համար, չի գտնվում սույն Հրահանգի գործողության ոլորտում այն դեպքում, երբ նման մշակումը վերաբերում է պետական անվտանգության հարցերին,

14) քանի որ, հաշվի առնելով տեղեկատվական հասարակության շրջանակներում ֆիզիկական անձանց տեսաձայնային տվյալների ձեռք բերման, փոխանցման, օգտագործման, հաշվառման, պահպանման և հաղորդելու համար օգտագործվող տեխնիկական միջոցների ներկայիս զարգացումների նշանակությունը, սույն Հրահանգը պետք է տարածվի նաև այդպիսի տվյալներ ընդգրկող մշակման վրա,

15) քանի որ սույն Հրահանգը տարածվում է այդպիսի տվյալների մշակման վրա միայն այն դեպքում, երբ այն ավտոմատացված է կամ մշակվող տվյալները ընդգրկված են կամ պետք է ընդգրկվեն անհատներին վերաբերող հատուկ չափորոշիչներով կազմված հաշվառման համակարգում, որը կընձեռի տվյալ անհատական տվյալներից

հեշտությամբ օգտվելու հնարավորություն,

16) քանի որ տեսաձայնային տվյալների մշակումը, ինչպես օրինակ՝ տեսահսկումը, չի գտնվում սույն Հրահանգի գործողության ոլորտում, եթե այն իրականացվում է հանրային անվտանգության, պաշտպանության, ազգային անվտանգության նպատակներով կամ քրեական իրավունքով կարգավորվող ոլորտներին առնչվող պետական գործունեության ընթացքում կամ գործունեության այլ տեսակների իրականացման ընթացքում, որոնք չեն ընդգրկվում Համայնքի իրավունքի գործողության ոլորտում,

17) քանի այնքանով, որքանով տեսաձայնագրային տվյալների մշակումն իրականացվում է լրագրության կամ գրական կամ գեղարվեստական վերարտադրության նպատակներով, մասնավորապես՝ տեսաձայնագրության ոլորտին, Հրահանգի սկզբունքները պետք է կիրառվեն սահմանափակ ձևով՝ 9-րդ հոդվածով սահմանված դրույթների համաձայն,

18) քանի որ Համայնքում անհատական տվյալների ցանկացած մշակում պետք է իրականացվի անդամ պետություններից մեկի իրավունքի համաձայն, որպեսզի անհատները չգրկվեն սույն Հրահանգով իրենց տրամադրված պաշտպանությունից, և քանի որ այս կապակցությամբ որևէ անդամ պետությունում հիմնադրված վերահսկող սուբյեկտի պատասխանատվության ներքո իրականացվող տվյալների մշակումը պետք է կարգավորվի տվյալ պետության իրավունքով,

19) քանի որ հաստատությունն անդամ պետության տարածքում ենթադրում է գործունեության արդյունավետ և իրական իրականացում կայուն կարգավորումների միջոցով, և քանի որ նման հաստատության իրավական կարգավիճակը՝ անկախ այն հանգամանքից՝ այն մասնաճյուղ է, թե՞ իրավասուբյեկտությամբ օժտված դուստր ընկերություն, վճռորոշ գործոն չէ այս պարագայում, և քանի որ, երբ մի քանի անդամ պետությունների տարածքում ստեղծվում է մեկ վերահսկող սուբյեկտ հատկապես իր դուստր ընկերություններով, ապա այն, ազգային կանոնները շրջանցելուց խուսափելու

համար, պետք է ապահովի, որ հաստատություններից յուրաքանչյուրը կատարի իր գործունեության նկատմամբ կիրառելի գործող ազգային իրավունքով նախատեսված պարտավորությունները,

20) քանի որ երրորդ երկրում հիմնադրված անձի կողմից տվյալները մշակելու հանգամանքը չպետք է խոչընդոտի՝ սույն Հրահանգով անհատներին տրամադրված պաշտպանությունը, և քանի որ այդ դեպքերում տվյալների մշակումը պետք է կարգավորվի այն անդամ պետության իրավունքով, որտեղ տեղակայված են օգտագործվող միջոցները, և պետք է լինեն երաշխիքներ սույն Հրահանգով սահմանված իրավունքների ու պարտականությունների կատարումը գործնականում ապահովելու համար,

21) քանի որ սույն Հրահանգը չի հակասում քրեական գործերով կիրառելի տարածքայնության կանոններին,

22) քանի որ անդամ պետությունները պետք է իրենց կողմից գործողության մեջ դրված օրենքներում կամ սույն Հրահանգի շրջանակներում ձեռնարկված միջոցները գործողության մեջ դնելիս ավելի հստակորեն սահմանեն այն ընդհանուր հանգամանքները, որոնց դեպքում տվյալների մշակումն օրինական է, և քանի որ 5-րդ հոդվածը, 7-րդ և 8-րդ հոդվածների հետ միասին, թույլ են տալիս անդամ պետություններին հիմնական կանոններից անկախ նախատեսել տվյալների մշակման հատուկ պայմաններ որոշակի ոլորտների համար և 8-րդ հոդվածով նախատեսված տվյալների տարատեսակների համար,

23) քանի որ անդամ պետություններն իրավասու են ապահովելու անհատների պաշտպանության իրագործումը ինչպես անհատների պաշտպանության վերաբերյալ ընդհանուր իրավունքով՝ անհատական տվյալների մշակման առնչությամբ, այնպես էլ իրավունքի տարբեր ճյուղերով, ինչպես օրինակ՝ վիճակագրական հաստատություններին վերաբերող իրավունքի ճյուղերով,



24) քանի որ սույն Հրահանգը չի անդրադառնում այն օրենսդրության վրա, որը կարգավորում է տվյալների մշակման հարցում իրավաբանական անձանց պաշտպանության հետ կապված հարցերը,

25) քանի որ պաշտպանության սկզբունքները պետք է մի կողմից արտացոլվեն անհատների, պետական մարմինների, ձեռնարկությունների, գործակալությունների և մշակման համար պատասխանատու այլ մարմինների վրա դրված պարտավորություններում, մասնավորապես՝ տվյալների որակի և տեխնիկական անվտանգության, վերահսկիչ մարմինն տեղեկացնելու և մշակումն իրականացնելու պայմանների առնչությամբ, իսկ մյուս կողմից՝ այն անհատների՝ մշակման ընթացքի մասին տեղեկացված լինելու, տվյալների շուրջ խորհրդակցելու, ուղղումների կատարում պահանջելու և որոշակի հանգամանքներում մշակմանն առարկելու իրավունքին, որոնց վերաբերյալ տվյալները ենթակա են մշակման,

26) քանի որ պաշտպանության սկզբունքները պետք է կիրառվեն ցանկացած այնպիսի տեղեկատվության նկատմամբ, որը վերաբերում է նույնականացված կամ նույնականացման հնարավորություն ունեցող անձանց, և քանի որ որոշելու համար, թե արդյո՞ք անձը կարող է նույնականացվել, թե՞ ոչ, պետք է հաշվի առնվեն բոլոր այն միջոցները, որոնք հիմնավոր կերպով կարող են օգտագործվել կամ վերահսկող սուբյեկտի կամ որևէ այլ անձի կողմից՝ տվյալ անձին նույնականացնելու համար, և քանի որ պաշտպանության սկզբունքները չեն կիրառվում այն տվյալների նկատմամբ, որոնք ստացվել են անանուն աղբյուրից և այնպիսի եղանակով, որ տվյալների սուբյեկտին այլևս հնարավոր չէ նույնականացնել, և քանի որ 27-րդ հոդվածի իմաստով վարքագծի կանոնագրքերը կարող են օգտակար գործիք լինել ուղեցույց նախատեսելու համար այնպիսի եղանակների վերաբերյալ, որոնցով տվյալները կարող են ստացվել անանուն աղբյուրներից և պահպանվել այնպիսի ձևով, որ տվյալների սուբյեկտի նույնականացումն այլևս հնարավոր չէ,

27) քանի որ անհատների պաշտպանությունը պետք է կիրառվի տվյալների ավտոմատ

մշակման վրա այնքանով, որքանով կիրառվում է ձեռքով մշակման վրա, և քանի որ այդ պաշտպանության շրջանակներն իրականում չպետք է կախված լինեն օգտագործվող տեխնիկական միջոցներից, այլապես դա լուրջ հակասությունների առաջացման ռիսկ կստեղծի, և քանի որ, ձեռքով մշակման դեպքում, սույն Հրահանգը տարածվում է միայն արխիվային համակարգերի, բայց ոչ չդասակարգված նյութերի վրա, և քանի, մասնավորապես, արխիվային համակարգի բովանդակությունը պետք է կազմավորվի անհատներին վերաբերող որոշակի չափորոշիչների հիման վրա, որոնք կապահովեն անհատական տվյալների դյուրամատչելիության հնարավորությունը, և քանի որ, 2(գ) հոդվածով նախատեսված սահմանման համաձայն, յուրաքանչյուր անդամ պետություն կարող է նախատեսել անհատական տվյալների կազմավորված շարքի տարրերը որոշելու համար տարբեր չափորոշիչներ և այդպիսի շարքի մատչելիությունը կարգավորող տարբեր չափորոշիչներ, և քանի որ այն նյութերը, նյութերի շարքը, ինչպես նաև դրանց կազմեցերը, որոնք ըստ որոշակի չափորոշիչների դասակարգված չեն, ոչ մի պարագայում չեն գտնվում սույն Հրահանգի գործողության ոլորտում,

28) քանի որ անհատական տվյալների ցանկացած մշակում պետք է իրականացվի օրինական և արդար հիմունքներով տվյալ անհատների համար, և քանի որ, մասնավորապես, տվյալները պետք է լինեն համարժեք, գործին վերաբերող և չսահմանազանցեն այն նպատակները, որոնց համար մշակվում են, և քանի որ այդ նպատակները պետք է լինեն հստակ և իրավաչափ ու պետք է որոշվեն տվյալները հավաքելու ժամանակ, և քանի որ դրանք հավաքելուն հաջորդող մշակման նպատակները չպետք է հակասեն այն նպատակներին, որոնց համար դրանք ի սկզբանե նախատեսված են եղել,

29) քանի որ պատմական, վիճակագրական կամ գիտական նպատակներով անհատական տվյալների հետագա մշակումը սովորաբար չի հակասում այն նպատակներին, որոնց համար տվյալները նախկինում հավաքվել են՝ պայմանով, որ անդամ պետությունները նախատեսեն պատշաճ երաշխիքներ, և քանի որ այդ երաշխիքները պետք է, մասնավորապես, բացառեն տվյալների օգտագործումը որևէ կոնկրետ անհատին վերաբերող միջոցների կամ որոշումների իրագործմանն օժանդակելու համար,

30) քանի որ օրինական համարվելու համար անհատական տվյալների մշակումը պետք է ի թիվս այլոց կատարվի տվյալների սուբյեկտի համաձայնությամբ կամ պետք է անհրաժեշտ լինի տվյալների սուբյեկտի համար պարտադիր պայմանագրի կնքման կամ կատարման համար, կամ իրականացվի որպես իրավական պահանջ կամ որոշակի առաջադրանքի կատարման համար՝ ելնելով հանրային շահերից կամ պաշտոնեական լիազորությունների իրականացումից, կամ իրականացվի ֆիզիկական կամ իրավաբանական անձանց օրինական շահերից ելնելով՝ պայմանով, որ տվյալների սուբյեկտի իրավունքները կամ ազատությունները չեն գերակայում, և քանի որ, մասնավորապես, արդյունավետ մրցակցությունը երաշխավորելիս ներգրավված շահերի միջև հավասարակշռությունը պահպանելու համար անդամ պետությունները կարող են նախատեսել այն հանգամանքները, որոնց դեպքում անհատական տվյալները կարող են տրամադրվել երրորդ կողմին՝ ընկերությունների և այլ մարմինների կողմից իրականացվող սովորական օրինական գործարարական գործունեության համատեքստում, և քանի որ անդամ պետությունները կարող են նմանապես սահմանել այն պայմանները, որոնց դեպքում անհատական տվյալները կարող են տրամադրվել երրորդ կողմին շուկայահանման նպատակներով՝ անկախ այն հանգամանքից՝ այն իրականացվում է առևտրային հիմունքներով թե՞ որևէ բարեգործական կազմակերպության կամ որևէ այլ միավորման կամ հիմնադրամի կողմից, օրինակ՝ քաղաքական բնույթի՝ համաձայն այն դրույթների, որոնք թույլ են տալիս տվյալների սուբյեկտին առարկել իրեն վերաբերող անհատական տվյալների մշակման դեմ՝ առանց ծախսեր կատարելու կամ առանց հիմնավորումներ ներկայացնելու պարտավորության,

31) քանի որ անհատական տվյալների մշակումը պետք է հավասարապես օրինական համարվի, եթե այն իրականացվում է տվյալների սուբյեկտի կյանքի համար էական նշանակություն ունեցող շահերի պաշտպանության համար,

32) քանի որ ազգային օրենսդրությամբ պետք է որոշվի, թե արդյո՞ք վերահսկող սուբյեկտը, որը կատարում է առաջադրանքը հանրային շահերից կամ պաշտոնեական լիազորությունների իրականացումից ելնելով, պետք է լինի պետական կառավարման մարմին կամ հանրային իրավունքով կարգավորվող այլ ֆիզիկական կամ

իրավաբանական անձ, կամ մասնավոր իրավունքով կարգավորվող մարմին, ինչպես օրինակ՝ մասնագիտական միավորումը,

33) քանի որ մարդու հիմնարար ազատություններն իրենց բնույթով ունահարելու կամ գաղտնիությունը խախտելու հնարավորություն ունեցող տվյալները չպետք է մշակվեն, եթե տվյալների սուբյեկտը հստակ չի տվել իր համաձայնությունը, և քանի որ, այնուամենայնիվ, այս արգելքից շեղում կատարելու դեպքերը պետք է հստակորեն սահմանված լինեն կոնկրետ կարիքները հաշվի առնելու համար, մասնավորապես այն դեպքերում, երբ այդ տվյալների մշակումն իրականացվում է որոշակի առողջական նպատակներով մասնագիտական գաղտնիությունը պահպանելու իրավական պարտավորություն ունեցող անձանց կողմից կամ որոշակի միավորումների կամ հիմնադրամների օրինական գործունեության ընթացքում, որի նպատակն է թույլատրել հիմնարար ազատությունների իրականացումը,

34) քանի որ անդամ պետությունները, կարևոր հանրային շահերի պաշտպանության հիմքով արդարացված լինելու դեպքում, պետք է նաև լիազորված լինեն շեղում կատարելու առանձին կատեգորիայի տվյալները մշակելու արգելքից, եթե հանրային շահերի պաշտպանության որոշ կարևոր հիմքեր դա արդարացնում են այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են՝ հանրային առողջապահությունը և սոցիալական ապահովությունը հատկապես առողջության ապահովագրության համակարգում հատուցումների և ծառայությունների ստացման համար ներկայացված պահանջներին լուծում տալու համար կիրառվող ընթացակարգերի որակն ու ծախսարդյունավետությունն ապահովելու համար, ինչպես նաև գիտահետազոտական աշխատանքների և պետական վիճակագրության համար, և քանի որ նրանք պարտավոր են, այնուամենայնիվ, նախատեսել որոշակի և պատշաճ երաշխիքներ, որպեսզի պաշտպանեն հիմնարար ազատությունները և անհատների գաղտնիության իրավունքը,

35) քանի որ, ավելին, որոշակի նպատակների հասնելու համար պաշտոնական մարմինների կողմից անհատական տվյալների մշակումը պաշտոնապես ճանաչված

կրոնական միավորումների այն նպատակներին հասնելու համար, որոնք սահմանված են սահմանադրական իրավունքով կամ միջազգային հանրային իրավունքով, իրականացվում է հանրային շահի պաշտպանության կարևոր հիմքերով,

36) քանի որ ժողովրդավարական համակարգի գործունեությունն ընտրական գործընթացներում որոշ անդամ պետություններում պահանջվում է, որ կուսակցությունները տեղեկություններ հավաքեն ժողովրդի քաղաքական հայացքների մասին, ապա նման տվյալների մշակումը կարող է թույլատրվել կարևոր հանրային շահերի պաշտպանության հիմքերով՝ պայմանով, որ նախատեսվեն պատշաճ երաշխիքներ,

37) քանի որ անհատական տվյալների մշակումը լրագրության կամ գրական կամ գեղարվեստական վերարտադրության նպատակներով, մասնավորապես, տեսաձայնային ոլորտում, պետք է համապատասխանի սույն Հրահանգի որոշակի դրույթների պահանջներից բացառություն կատարելու պայմանին այնքանով, որքանով որ դա անհրաժեշտ է անհատի հիմնարար ազատությունները տեղեկատվության ազատության և, հատկապես՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածով երաշխավորված տեղեկատվություն ստանալու և տարածելու իրավունքի հետ համաձայնեցնելու համար, և քանի որ, հետևաբար, անդամ պետությունները հիմնարար ազատությունների միջև հավասարակշռություն ապահովելու համար պետք է սահմանեն բացառություններ կամ շեղումներ կատարելու հնարավորություն՝ կապված տվյալների մշակման օրինականության վերաբերյալ ընդհանուր միջոցների հետ, տվյալները երրորդ երկրներին փոխանցելու վերաբերյալ և վերահսկիչ մարմնի լիազորությունների վերաբերյալ միջոցների հետ, և քանի որ դա չպետք է հանգեցնի անդամ պետությունների կողմից այդ միջոցներից բացառություններ սահմանելուն անվտանգությունն ապահովելու նպատակով, և քանի որ առնվազն այս ոլորտի համար պատասխանատու վերահսկիչ մարմինը պետք է նույնպես օժտված լինի որոշակի փաստացի լիազորություններով, օրինակ՝ պարբերական հաշվետվություններ հրապարակելու կամ որոշակի հարցերով դատական մարմիններին դիմելու լիազորություններով,

38) քանի որ տվյալների մշակման արդար լինելն ապահովելու համար տվյալների սուբյեկտը պետք է հնարավորություն ունենա տեղեկանալու տվյալների մշակման գործընթացի մասին, իսկ եթե տվյալները վերցվում են իրենից՝ ստանալու ճշգրիտ և լրիվ տեղեկատվություն՝ ի նկատի ունենալով տվյալները հավաքելու հանգամանքները,

39) քանի որ տվյալների մշակման որոշակի գործառնություններ ներառում են այնպիսի տվյալներ, որոնք վերահսկող սուբյեկտը ուղղակիորեն չի հավաքում տվյալների սուբյեկտից, և քանի որ, ավելին, տվյալներն օրինական ձևով կարող են տրամադրվել երրորդ կողմին նույնիսկ այն դեպքում, երբ այդ տրամադրումը նախատեսված չի եղել տվյալները դրանց սուբյեկտից հավաքելու ժամանակ, և քանի որ բոլոր այդ դեպքերում տվյալների սուբյեկտը պետք է տեղեկացվի տվյալները հաշվառելու ժամանակի կամ ամենաուշը՝ տվյալներն առաջին անգամ երրորդ կողմին տրամադրելու ժամանակի մասին,

40) քանի որ, այդուհանդերձ, անհրաժեշտ չէ նախատեսել այդ պարտավորությունը, եթե տվյալների սուբյեկտն արդեն տիրապետում է այդ տեղեկատվությունը, և քանի որ, ավելին, նման պարտավորություն չի սահմանվի, եթե տվյալների հաշվառումը և տրամադրումը հստակորեն նախատեսված են օրենքով կամ եթե տեղեկատվության տրամադրումը տվյալների սուբյեկտին անհնարին է կամ կարող է առաջացնել անհամաչափ հետևանքներ, օրինակ՝ այն դեպքերում, երբ մշակումն իրականացվում է պատմական, վիճակագրական կամ գիտական նպատակներով, և քանի որ, այս առումով, կարող են հաշվի առնվել տվյալների սուբյեկտների թիվը, տվյալների վաղեմության ժամկետը, ինչպես նաև փոխհատուցման սահմանված միջոցները,

41) քանի որ ցանկացած անձ պետք է հնարավորություն ունենա իրականացնելու իրեն վերաբերող և մշակման մեջ գտնվող տվյալների մատչելիության իրավունքը, մասնավորապես՝ տվյալների հավաստիությունը և դրանց մշակման օրինականությունը ստուգելու համար, և քանի որ տվյալների յուրաքանչյուր սուբյեկտ պետք է միևնույն հիմքերով իրավունք ունենա տեղեկանալու իրեն վերաբերող տվյալների ավտոմատ

մշակման հիմքում դրված մեխանիզմների վերաբերյալ առնվազն 15(1) հոդվածով նախատեսված ավտոմատացված որոշումների դեպքում, և քանի որ այդ իրավունքի իրացումը չպետք է բացասաբար անդրադառնա առևտրային գաղտնիքների կամ մտավոր սեփականության, մասնավորապես՝ ծրագրերի հեղինակային իրավունքների վրա, և քանի որ այդ դիտարկումները, այդուհանդերձ, չպետք է հանգեցնեն՝ տվյալների սուբյեկտին տեղեկություններ տրամադրելը մերժելու համար,

42) քանի որ անդամ պետությունները, տվյալների սուբյեկտի շահերից ելնելով, կամ մյուսների իրավունքներն ու ազատությունները պաշտպանելու համար կարող են սահմանափակել մատչելիության և տեղեկատվություն ստանալու իրավունքները, և քանի որ անդամ պետությունները կարող են, օրինակ, սահմանել, որ բժշկական տվյալները կարող են տրամադրվել միայն առողջապահության ոլորտի մասնագետներին,

43) քանի որ մատչելիության և տեղեկատվություն ստանալու իրավունքների և վերահսկող սուբյեկտի որոշակի պարտականությունների սահմանափակումներ կարող են նմանապես սահմանվել անդամ պետությունների կողմից այնքանով, որքանով դա անհրաժեշտ է, օրինակ, ազգային անվտանգության, պաշտպանության, հանրային ապահովության կամ անդամ պետության կամ Միության կարևոր տնտեսական կամ ֆինանսական շահերի պաշտպանության համար, ինչպես նաև քրեական գործով քննություն կամ քրեական հետապնդում ու կարգավորվող մասնագիտություններում էթիկայի կանոնների խախտման դեպքերի քննություն իրականացնելու համար, և քանի որ բացառությունների և սահմանափակումների ցանկը պետք է ներառի հանրային անվտանգության, տնտեսական կամ ֆինանսական շահերի պաշտպանության և հանցավորության կանխման վերաբերյալ վերջին երեք ոլորտների համար անհրաժեշտ դիտանցման, տեսչական ստուգման կամ կարգավորման խնդիրները, և քանի որ խնդիրների թվարկումը նշված երեք ոլորտներում չի ազդում պետական անվտանգության կամ պաշտպանության նպատակների համար սահմանված բացառությունների կամ սահմանափակումների օրինականության վրա,

44) քանի որ անդամ պետությունները, Համայնքի իրավունքի դրույթների ուժով, վերը նշված նպատակներն ապահովելու համար նույնպես կարող են շեղում կատարել՝ սույն Հրահանգի այն դրույթներից, որոնք վերաբերում են մատչելիության իրավունքին, անհատներին տեղեկացնելու պարտավորությանը և տվյալների որակին,

45) քանի որ այն դեպքերում, երբ տվյալները պետք է օրինական ձևով մշակվեն հանրային շահերի, պաշտոնական լիազորությունների, ֆիզիկական կամ իրավաբանական անձանց օրինական շահերի հիման վրա, ապա տվյալների ցանկացած սուբյեկտ, այնուամենայնիվ, պետք է իրավունք ունենա, իր առանձնահատուկ իրավիճակից բխող օրինական և համոզիչ հիմքերով առարկել իրեն վերաբերող ցանկացած տվյալի մշակմանը, և քանի որ անդամ պետությունները կարող են, այդուհանդերձ, հակառակ դրան, ազգային դրույթներ նախատեսել,

46) քանի որ տվյալների սուբյեկտների իրավունքների և շահերի պաշտպանությունը՝ կապված նրանց անհատական տվյալների մշակման հետ, պահանջում է, որ ձեռնարկվեն համապատասխան տեխնիկական և կազմակերպչական միջոցներ, ինչպես տվյալների մշակման համակարգի նախագծման, այնպես էլ ինքնին մշակման ժամանակ, մասնավորապես՝ անվտանգություն ապահովելու և, հետևաբար, ցանկացած չթույլատրված մշակում կանխելու համար, և քանի որ անդամ պետությունները պարտավոր են ապահովել, որ վերահսկող սուբյեկտները կատարեն նշված պահանջները, և քանի որ այդ միջոցները պետք է ապահովեն անվտանգության համապատասխան մակարդակ՝ հաշվի առնելով առկա տեխնոլոգիաները և դրանց իրականացման հետ կապված ծախսերը՝ պայմանավորված մշակման ընթացքում առաջացող ռիսկերով և պաշտպանվող տվյալների բնույթով,

47) քանի որ այն դեպքերում, երբ անհատական տվյալներ ներառող հաղորդագրությունը փոխանցվում է այնպիսի հեռահաղորդակցության կամ էլեկտրոնային փոստի ծառայության միջոցով, որի միակ նպատակը նման հաղորդագրություններ փոխանցելն է, ապա հաղորդագրության մեջ պարունակվող անհատական տվյալների առնչությամբ վերահսկող սուբյեկտ է համարվում այն անձը, որից ստացվում է հաղորդագրությունը,



այլ ոչ թե այն անձը, որը տրամադրում է փոխանցման ծառայություններ, և քանի որ, այդուհանդերձ, այդպիսի ծառայություններ տրամադրողները դիտվում են որպես վերահսկող սուբյեկտներ՝ այն լրացուցիչ անհատական տվյալների մշակման առնչությամբ, որոնք անհրաժեշտ են ծառայության մատուցման համար,

48) քանի որ վերահսկիչ մարմինն տեղեկացնելու կարգը նախատեսված է մշակման ցանկացած գործողության նպատակների և հիմնական հատկանիշների բացահայտումն ապահովելու համար՝ սույն Հրահանգի շրջանակներում ձեռնարկված ազգային միջոցներին նշված գործողության համապատասխանությունը ստուգելու նպատակով,

49) քանի որ վարչական բնույթի ձևական կողմից խուսափելու համար, անդամ պետությունների կողմից կարող են նախատեսվել ծանուցման պարտականությունից բացառություններ և պահանջվող ծանուցման կարգի պարզեցում այն դեպքերում, երբ մշակումը կարող է բացասաբար անդրադառնալ տվյալների սուբյեկտի իրավունքների և ազատությունների վրա՝ պայմանով, որ դա համապատասխանի դրա համար սահմանափակումներ նախատեսող անդամ պետության կողմից ձեռնարկված միջոցին, և քանի որ բացառություններ կամ կարգի պարզեցում կարող է նմանապես նախատեսվել անդամ պետության կողմից նաև այն դեպքերում, երբ վերահսկող սուբյեկտի կողմից նշանակված անձը ապահովում է, որ տվյալների մշակումը բացասաբար չանդրադառնա տվյալների սուբյեկտի իրավունքների և ազատությունների վրա, և քանի որ տվյալների պաշտպանության գծով այդպիսի պաշտոնյան՝ անկախ այն հանգամանքից՝ նա վերահսկող սուբյեկտի աշխատողն է, թե՛ ոչ, պետք է զբաղեցնի այնպիսի պաշտոն, որ կարողանա իրականացնել իր գործառույթները լիակատար անկախության պայմաններում,

50) քանի որ բացառությունները կամ կարգի պարզեցումը կարող են նախատեսվել տվյալների մշակման գործողությունների դեպքում, որոնց միակ նպատակը գրանցամատյան վարելն է, որը ազգային իրավունքի համաձայն, նախատեսված է հանրությանը տեղեկություններ տրամադրելու համար և հանրության կամ օրինական շահ հետապնդող ցանկացած անձի համար ազատ է խորհրդակցության համար,

51) քանի որ, այնուամենայնիվ, կարգի պարզեցումը կամ բացառությունները ծանուցման պարտականությունից վերահսկող սուբյեկտին չեն ազատում՝ սույն Հրահանգից բխող ցանկացած այլ պարտավորության կատարումից,

52) քանի որ այս համատեքստում, հետին ամսաթվով (*ex post facto*) ստուգումը իրավասու մարմինների կողմից ընդհանուր առմամբ համարվում է բավարար միջոց,

53) քանի որ, այդուհանդերձ, տվյալների մշակման առանձին գործողությունները, իրենց բնույթից, մասշտաբից կամ նպատակներից ելնելով, կարող են որոշակի ռիսկեր առաջացնել տվյալների սուբյեկտի իրավունքների և ազատությունների համար, ինչպես օրինակ՝ անհատին իրավունքից, օգուտներից կամ պայմանագրից զրկելը, կամ նոր տեխնոլոգիաների հատուկ օգտագործման բնույթից ելնելով, և քանի որ նման ռիսկերը, անդամ պետությունների կողմից, ցանկության դեպքում, իրենց օրենսդրությամբ սահմանելը թողնված է նրանց հայեցողությանը,

54) քանի որ հասարակությունում ձեռնարկված մշակման ամբողջ գործընթացի կապակցությամբ նման ռիսկեր առաջացնող դեպքերի թիվը պետք է չափազանց սահմանափակ լինի, և քանի որ անդամ պետությունները պետք է սահմանեն, որ վերահսկիչ մարմինը կամ տվյալների պաշտպանության գծով պատասխանատուն՝ այդ մարմնի հետ համագործակցությամբ ստուգի այդպիսի մշակումը նախքան դրա իրականացվելը, և քանի որ այդ նախապես ստուգումից հետո վերահսկիչ մարմինը կարող է, իր ազգային օրենսդրության համաձայն, կարծիք կամ թույլտվություն տրամադրել տվյալների մշակման վերաբերյալ, և քանի որ նման ստուգումը կարող է հավասարապես իրականացվել ինչպես ազգային խորհրդարանի կողմից ընդունվող միջոցի նախապատրաստման, այնպես էլ այդպիսի օրենսդրական միջոցի վրա հիմնված միջոցի նախապատրաստման ընթացքում, որը սահմանում է մշակման բնույթը և նախատեսում պատշաճ երաշխիքներ,

55) քանի որ, երբ վերահսկող սուբյեկտի կողմից չեն հարգվում տվյալների սուբյեկտների իրավունքները, ապա ազգային օրենսդրությամբ պետք է դատական պաշտպանության միջոցներ նախատեսվեն, և քանի որ ապօրինի մշակման հետևանքով անհատի կրած ցանկացած վնաս պետք է փոխհատուցվի վերահսկող սուբյեկտի կողմից, որը կարող է նաև ազատվել պատասխանատվությունից, եթե կարողանա ապացուցել, որ պատասխանատու չէ հասցված վնասի համար, մասնավորապես, այն դեպքերում, երբ նա հաստատում է տվյալների սուբյեկտի մեղքի առկայությունը կամ անհաղթահարելի ուժի (*force majeure*) հետևանքով, և քանի որ պատժամիջոցներ պետք է կիրառվեն ցանկացած այն անձի նկատմամբ, ով չի կատարում սույն Հրահանգի շրջանակներում ձեռնարկված ազգային միջոցները՝ անկախ այն հանգամանքից նրա վրա տարածվում է հանրային, թե՛ մասնավոր իրավունքը,

56) քանի որ անհատական տվյալների միջսահմանային արտահոսքն անհրաժեշտ է միջազգային առևտրի ընդլայնման համար, և քանի որ սույն Հրահանգով Համայնքում երաշխավորված անհատների պաշտպանությունը չի խոչընդոտում անհատական տվյալների՝ երրորդ երկրներ կատարվող փոխանցումներին, որոնք ապահովում են պաշտպանության համապատասխան մակարդակ, և քանի որ երրորդ երկրի կողմից տրամադրվող պաշտպանության մակարդակի համապատասխան լինելը պետք է գնահատվի՝ փոխանցման գործողության կամ փոխանցման մի շարք գործողությունների հետ կապված բոլոր հանգամանքներից,

57) քանի որ, մյուս կողմից, անհատական տվյալների փոխանցումը երրորդ երկիր, որը չի ապահովում պաշտպանության համապատասխան մակարդակ, պետք է արգելվի,

58) քանի որ այդ արգելքից բացառություններ կատարելու համար պետք է դրույթներ նախատեսվեն որոշակի այնպիսի հանգամանքների առկայության դեպքում, երբ տվյալների սուբյեկտը տալիս է իր համաձայնությունը, երբ տվյալների փոխանցումն անհրաժեշտ է պայմանագրի կամ օրինական պահանջի կապակցությամբ, երբ դա պահանջվում է կարևոր հանրային շահից ելնելով, օրինակ՝ հարկային կամ մաքսային մարմինների կամ սոցիալական ապահովության հարցերով իրավասու

ծառայությունների միջև տվյալների միջազգային փոխանցման դեպքում, երբ տվյալների փոխանցումը կատարվում է օրենքի համաձայն ստեղծված գրանցամատյանից, որը նախատեսված է խորհրդակցության համար հանրության կամ օրինական շահ հետապնդող անձանց կողմից, և քանի որ այդ դեպքում տվյալների նման փոխանցումը չպետք է ընդգրկի տվյալների ամբողջությունը կամ գրանցամատյանի մեջ պարունակվող բոլոր կատեգորիաների տվյալները, իսկ երբ գրանցամատյանը նախատեսված է խորհրդակցության համար օրինական շահ հետապնդող անձանց կողմից, ապա փոխանցումը պետք է կատարվեի միայն այդ անձանց պահանջով կամ եթե նրանք պետք է հանդես գան որպես ստացողներ,

59) քանի որ այն դեպքերում, երբ վերահսկող սուբյեկտը ապահովում է պատշաճ իրավական երաշխիքներ, առանձնահատուկ միջոցներ կարող են ձեռնարկվել՝ երրորդ երկրներում պաշտպանության բացակայությունը փոխհատուցելու համար, և քանի որ, ավելին, պետք է նախատեսվի դրույթ՝ Համայնքի և այդպիսի երրորդ երկրների միջև բանակցության ընթացակարգերի վերաբերյալ,

60) քանի որ երրորդ երկրներ կատարվող փոխանցումներն, ամեն դեպքում, կարող են իրականացվել միայն անդամ պետությունների կողմից սահմանված դրույթներին լիովին համապատասխանելու դեպքում՝ սույն Հրահանգին, մասնավորապես՝ դրա 8-րդ հոդվածին համապատասխան,

61) քանի որ անդամ պետություններն ու Հանձնաժողովը իրենց իրավասության տակ գտնվող ոլորտներում պետք է խրախուսեն, որ առևտրային միավորումների ու այլ ներկայացուցչական շահագրգիռ կազմակերպությունները մշակեն վարքագծի կանոնագրքեր սույն Հրահանգի կիրարկումը հեշտացնելու համար՝ հաշվի առնելով այն մշակման որոշակի առանձնահատկությունները, որն իրականացվում է առանձին բնագավառներում և պահպանելով դրա կիրարկման համար ընդունված ազգային դրույթները,

62) քանի որ անդամ պետություններում վերահսկիչ մարմինների հիմնադրումը, որոնք իրականացնում են իրենց գործառույթները լիակատար անկախության հիմքով, անհատների պաշտպանության էական բաղադրիչն է՝ անհատական տվյալների մշակման առնչությամբ,

63) քանի որ նման մարմինները պետք է ունենան անհրաժեշտ միջոցներ իրենց պարտականությունները կատարելու համար, այդ թվում՝ քննություն և միջամտություն իրականացնելու լիազորություններ, մասնավորապես, այն դեպքերում, երբ բողոքներ են ստացվում անհատներից, ինչպես նաև դատական վարույթում ներգրավվելու լիազորություններ, և քանի որ նման մարմինները պետք է օգնեն ապահովել մշակման թափանցիկությունն այն անդամ պետություններում, որոնց իրավազորության ներքո նրանք գտնվում են,

64) քանի որ տարբեր անդամ պետությունների վերահսկիչ մարմինները միմյանց օժանդակելու կարիք կունենան իրենց պարտականությունները կատարելու հարցում այնպես, որ Եվրոպական միության ամբողջ տարածքում ապահովեն պաշտպանության կանոնների պատշաճ կատարումը,

65) քանի որ Համայնքի մակարդակով պետք է ստեղծվի Անհատական տվյալների մշակման առնչությամբ անհատների պաշտպանության հարցերով աշխատանքային խումբ, որն իր գործառույթների իրականացման հարցում կլինի լիովին անկախ, և քանի որ, հաշվի առնելով դրա առանձնահատուկ բնույթը, այն պետք է խորհրդատվություն տրամադրի Հանձնաժողովին և, մասնավորապես, նպաստի սույն Հրահանգի համաձայն ընդունված ազգային կանոնների միասնական կիրառմանը,

66) քանի որ երրորդ երկրներին տվյալներ փոխանցելու առումով սույն Հրահանգի կիրառումը կոչ է անում Հանձնաժողովին օժտել կիրարկման լիազորություններով և ընթացակարգ նախատեսել՝ Խորհրդի 87/373/ԵՏՀ որոշման համաձայն,

67) քանի որ 1994 թվականի դեկտեմբերի 20-ին Եվրոպական պառլամենտի, Խորհրդի և Հանձնաժողովի միջև ստորագրվել է ժամանակավոր համաձայնության (*modus vivendi*) վերաբերյալ համաձայնագիր՝ ԵՀ Պայմանագրի 189-րդ հոդվածով սահմանված ընթացակարգի համաձայն ընդունված ակտերի համար կիրարկման միջոցների մասին,

68) քանի որ անհատների իրավունքների և ազատությունների պաշտպանության, մասնավորապես՝ նրանց գաղտնիության իրավունքի վերաբերյալ սույն Հրահանգով նախատեսված սկզբունքները անհատական տվյալների մշակման առնչությամբ կարող են լրացվել և հստակեցվել այդ սկզբունքների վրա հիմնված որոշակի կանոններով, մասնավորապես, այնքանով, որքանով առնչվում են առանձին բնագավառներին,

69) քանի որ պետություններին պետք է տրամադրվի ոչ ավել, քան երեք տարի ժամանակ՝ հաշված սույն Հրահանգը փոխատեղող ազգային միջոցներն ուժի մեջ մտնելու պահից, որի ընթացքում այդպիսի նոր ազգային կանոնների աստիճանական կիրառումը մշակման բոլոր գործողությունների նկատմամբ արդեն իսկ իրականացվում է, և քանի որ, դրանց ծախսարդյունավետ կիրարկումը հեշտացնելու նպատակով անդամ պետություններին կտրամադրվի լրացուցիչ ժամկետ, որը կլրանա սույն Հրահանգի ընդունման օրվանից 12 տարի հետո՝ ապահովելու համար ձեռքով արխիվացնելու գործող համակարգերի համապատասխանությունը Հրահանգի որոշակի դրույթներին, և քանի որ նման արխիվացման համակարգերում պարունակվող տվյալները մշակվում են ձեռքով այդ երկարացված անցումային ժամանակահատվածում, ուստի այդ համակարգերը պետք է համապատասխանեցվեն այդ դրույթներին նման մշակման ժամանակ,

70) քանի որ տվյալների սուբյեկտից չի պահանջվում կրկին համաձայնություն տալ՝ թույլատրելու համար վերահսկող սուբյեկտին՝ սույն Հրահանգի համաձայն ընդունված ազգային դրույթներն ուժի մեջ մտնելուց հետո շարունակել զգայուն հարցեր շոշափող տվյալների մշակումը, որոնք անհրաժեշտ են ազատ և տեղեկացված համաձայնության հիման վրա կնքված պայմանագրի կատարման համար՝ նախքան այդ դրույթներն ուժի մեջ մտնելը,

71) քանի որ սույն Հրահանգը չի խոչընդոտում անդամ պետությունների՝ շուկայի կարգավորման աշխատանքներին, որոնց նպատակը իրենց տարածքում բնակվող սպառողների պաշտպանությունն է այնքանով, որքանով նման կարգավորումը չի վերաբերում անհատների պաշտպանությանը՝ անհատական տվյալների մշակման առնչությամբ,

72) քանի որ սույն Հրահանգը թույլ է տալիս, որ պաշտոնական փաստաթղթերի հանրային մատչելիության սկզբունքը հաշվի առնվի սույն Հրահանգով նախատեսված սկզբունքները կիրարկելիս,

**ԸՆԴՈՒՆԵՑԻՆ ՍՈՒՅՆ ՀՐԱՀԱՆԳԸ.**

## **ԳԼՈՒԽ I**

### **ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

#### *Հոդված 1*

#### **Հրահանգի առարկան**

1. Սույն Հրահանգի համաձայն, անդամ պետությունները պետք է պաշտպանեն ֆիզիկական անձանց հիմնարար իրավունքներն ու ազատությունները և, մասնավորապես, նրանց գաղտնիության իրավունքը՝ անհատական տվյալների մշակման առնչությամբ:

2. Անդամ պետությունները չպետք է ո՛չ սահմանափակեն, ո՛չ էլ արգելեն անհատական տվյալների ազատ արտահոսքն անդամ պետությունների միջև՝ 1-ին պարբերության շրջանակներում տրամադրվող պաշտպանության հետ կապված հիմքերով:

#### *Հոդված 2*

#### **Սահմանումները**

Սույն Հրահանգի նպատակներով՝

- ա) «անհատական տվյալ» նշանակում է ցանկացած տեղեկատվություն, որը վերաբերում է նույնականացված կամ նույնականացվող ֆիզիկական անձին («տվյալների սուբյեկտին»)  
նույնականացվող անձ է համարվում նա, ում ինքնությունը կարելի է ուղղակիորեն կամ անուղղակիորեն որոշել, մասնավորապես, հղում կատարելով նույնականացման համարին կամ նրա ֆիզիկական, հոգեբանական, մտավոր, տնտեսական, մշակութային կամ սոցիալական ինքնությանը հատուկ մեկ կամ ավելի գործոններին.
- բ) «անհատական տվյալների մշակում» («մշակում») նշանակում է ցանկացած գործողություն կամ գործողությունների շարք, որոնք կատարվում են անհատական տվյալների նկատմամբ՝ անկախ այն հանգամանքից դրանք իրականացվում են ավտոմատ եղանակով, թե՛ ոչ, ինչպիսիք են՝ հավաքելը, գրառելը, համակարգելը, պահպանելը, ճշգրտելը կամ փոփոխելը, վերականգնելը, դրանց շուրջ խորհրդակցելը, օգտագործելը, վեր հանելը փոխանցման միջոցով, տարածելը կամ այլ կերպ մատչելի դարձնելը, խմբավորելը կամ համադրելը, արգելափակելը, ջնջելը կամ ոչնչացնելը.
- գ) «անհատական տվյալների արխիվացման համակարգ» («արխիվացման համակարգ») նշանակում է անհատական տվյալների ցանկացած կառուցվածքային շարք, որը մատչելի է ըստ որոշակի չափորոշիչների՝ անկախ այն հանգամանքից այն կենտրոնացված է, թե՛ ապակենտրոնացված կամ էլ ֆունկցիոնալ կամ աշխարհագրական առումով՝ տարանջատված.
- դ) «վերահսկող սուբյեկտ» նշանակում է ֆիզիկական կամ իրավաբանական անձ, պետական մարմին, գործակալություն կամ ցանկացած այլ մարմին, որն ինքնուրույն կամ այլոց հետ համատեղ որոշում է անհատական տվյալների մշակման նպատակները և եղանակները, իսկ այն դեպքերում, երբ մշակման նպատակներն ու եղանակները սահմանվում են ազգային կամ Համայնքի օրենքներով կամ կանոնակարգերով, վերահսկող սուբյեկտը կամ նրա նշանակման չափորոշիչները կարող են սահմանվել ազգային կամ Համայնքի իրավունքով.
- ե) «մշակող» նշանակում է ֆիզիկական կամ իրավաբանական անձ, պետական մարմին, գործակալություն կամ ցանկացած այլ մարմին, որը վերահսկող սուբյեկտի անունից մշակում է անհատական տվյալները.
- զ) «երրորդ կողմ» նշանակում է տվյալների սուբյեկտից, վերահսկող սուբյեկտից, մշակողից և վերահսկող սուբյեկտի կամ մշակողի անմիջական հսկողության ներքո տվյալները մշակելու թույլտվություն ունեցող անձանցից տարբեր ցանկացած ֆիզիկական կամ իրավաբանական անձ, պետական մարմին, գործակալություն կամ ցանկացած այլ մարմին.



- է) «ստացող» նշանակում է ցանկացած ֆիզիկական կամ իրավաբանական անձ, պետական մարմին, գործակալություն կամ ցանկացած այլ մարմին՝ լինի երրորդ կողմ, թե՛ ոչ, ում տրամադրվում են տվյալները. այդուհանդերձ, հատուկ հարցման շրջանակներում տվյալներ ստացող մարմինները չեն դիտվում որպես ստացողներ.
- ը) «տվյալների սուբյեկտի համաձայնություն» նշանակում է տվյալների սուբյեկտի կողմից որոշակի և տեղեկացված հիմունքներով արված ազատ կամահայտնություն, որով նա տալիս է իր հավանությունը՝ իրեն վերաբերող անհատական տվյալները մշակելու համար:

### *Հոդված 3*

#### **Գործողության ոլորտը**

1. Սույն Հրահանգը տարածվում է անհատական տվյալների՝ ավտոմատ եղանակներով ամբողջական կամ մասնակի մշակման վրա, ինչպես նաև այն անհատական տվյալների՝ ոչ ավտոմատ եղանակներով իրականացվող մշակման վրա, որոնք արխիվացման համակարգի մաս են կազմում կամ նախատեսված են արխիվացման համակարգի մաս կազմելու համար:
2. Սույն Հրահանգը չի տարածվում անհատական տվյալների մշակման վրա, որը կատարվում է՝
  - Համայնքի իրավունքի գործողության ոլորտից դուրս իրականացվող գործունեության ընթացքում, ինչպես օրինակ՝ «Եվրոպական միության հիմնադրման մասին» պայմանագրի V և VI բաժիններով նախատեսված գործունեության ընթացքում, և, ամեն դեպքում, չի տարածվում մշակման այն գործողությունների վրա, որոնք վերաբերում են հանրային անվտանգությանը, պաշտպանությանը, պետական անվտանգությանը (այդ թվում՝ պետության տնտեսական բարեկեցությանը, երբ մշակման գործողությունը վերաբերում է պետական անվտանգության հարցերին) և քրեական իրավունքի ոլորտում իրականացվող պետության գործունեությանը.
  - ֆիզիկական անձի կողմից զուտ անձնական կամ կենցաղային նպատակներով իրականացվող գործունեության ընթացքում:

#### Հոդված 4

##### **Կիրառելի ազգային իրավունքը**

1. Յուրաքանչյուր անդամ պետություն կիրառում է այն ազգային դրույթները, որոնք այն սույն Հրահանգին համապատասխան ընդունում է անհատական տվյալների մշակման նկատմամբ, երբ՝

- ա) մշակումն իրականացվում է՝ անդամ պետության տարածքում վերահսկող սուբյեկտի հաստատության գործունեության շրջանակներում, իսկ երբ նույն վերահսկող սուբյեկտը հիմնադրվում է մի քանի անդամ պետությունների տարածքում, ապա այն պետք է միջոցներ ձեռնարկի ապահովելու համար, որ այդ հաստատություններից յուրաքանչյուրը պահպանի կիրառելի ազգային իրավունքով սահմանված պարտականությունները.
- բ) վերահսկող սուբյեկտը հիմնադրվում է ոչ թե անդամ պետության տարածքում, այլ այնպիսի վայրում, որտեղ գործում է իր ազգային իրավունքը միջազգային հանրային իրավունքի ուժով.
- գ) վերահսկող սուբյեկտը չի հիմնադրվում Համայնքի տարածքում, սակայն անհատական տվյալների մշակման համար օգտագործում է տվյալ անդամ պետության տարածքում տեղակայված ավտոմատացված կամ այլ սարքավորում՝ բացառությամբ այն դեպքերի, երբ այդ սարքավորումն օգտագործվում է միայն Համայնքի տարածքով տարանցման նպատակների համար:

2. Առաջին 1(գ) պարբերության մեջ նշված հանգամանքներում վերահսկող սուբյեկտը պետք է նշանակի տվյալ անդամ պետության տարածքում հիմնադրված ներկայացուցիչ՝ չհակասելով այն վարույթներին, որոնք կարող են հարուցվել ինքնին վերահսկող սուբյեկտի դեմ:

**Անհատական տվյալների մշակման օրինականության ընդհանուր կանոնները**

*Հոդված 5*

Անդամ պետությունները, սույն Գլխի դրույթների սահմանափակումների շրջանակներում, պետք է ավելի հստակ սահմանեն այն պայմանները, որոնց դեպքում անհատական տվյալների մշակումը համարվում է օրինական:

**ԲԱԺԻՆ I**

**Տվյալների որակի հետ կապված սկզբունքները**

*Հոդված 6*

1. Անդամ պետություններն ապահովում են, որ անհատական տվյալները՝

- ա) մշակվեն արդար և օրինական ձևով.
- բ) հավաքվեն որոշակի, հստակ և իրավաչափ նպատակներով և հետագայում չմշակվեն այդ նպատակներին չհամապատասխանող որևէ եղանակով: Տվյալների հետագա մշակումը պատմական, վիճակագրական կամ գիտական նպատակներով չի դիտվում որպես նպատակին չհամապատասխանող՝ պայմանով, որ անդամ պետությունները նախատեսեն պատշաճ երաշխիքներ.
- գ) համարժեք, համապատասխան և չսահմանազանցող լինեն այն նպատակների առնչությամբ, որոնց համար հավաքվում են և (կամ) հետագայում մշակվում.
- դ) լինեն ճշգրիտ և, անհրաժեշտության դեպքում, թարմացվեն, ողջամիտ ամեն քայլ պետք է ձեռնարկել ապահովելու համար, որ այն տվյալները, որոնք համարվում են ոչ ճշգրիտ կամ թերի՝ ելնելով այն նպատակներից, որոնց համար դրանք հավաքվել կամ հետագայում մշակվել են, ջնջվեն կամ ուղղվեն.
- ե) պահվեն այնպիսի ձևով, որը թույլ կտա նույնականացնել տվյալների սուբյեկտին այնքան ժամանակով, որը բավարար կլինի այն նպատակներն իրագործելու համար, որոնց համար տվյալները հավաքվել կամ հետագայում մշակվել են: Անդամ պետությունները պետք է նախատեսեն պատշաճ երաշխիքներ անհատական այն տվյալների համար, որոնք պատմական, վիճակագրական կամ գիտական

նպատակներով օգտագործվելու համար պահվում են ավելի երկար ժամանակահատվածներով:

2. Առաջին պարբերության հետ համապատասխանությունն ապահովելու պարտավորությունը դրված է վերահսկող սուբյեկտի վրա:

## ԲԱԺԻՆ II

### **Տվյալների մշակումն օրինական դարձնելու չափորոշիչները**

#### *Հոդված 7*

Անդամ պետությունները սահմանում են, որ անհատական տվյալները կարող են մշակվել միայն այն դեպքերում, երբ.

- ա) տվյալների սուբյեկտը միանշանակ տվել է իր համաձայնությունը, կամ
- բ) մշակումն անհրաժեշտ է՝ ի կատարումն այն պայմանագրի, որի կողմ է հանդիսանում տվյալների սուբյեկտը, կամ անհրաժեշտ է տվյալների սուբյեկտի պահանջով քայլեր ձեռնարկելու համար՝ նախքան պայմանագիր կնքելը, կամ
- գ) մշակումն անհրաժեշտ է վերահսկող սուբյեկտի վրա դրված պարտավորությունը կատարելու համար, կամ
- դ) մշակումն անհրաժեշտ է՝ տվյալների սուբյեկտի կենսական շահերի պաշտպանության համար, կամ
- ե) մշակումն անհրաժեշտ է հանրության շահերից բխող խնդրի իրականացման կամ վերահսկող սուբյեկտին կամ այն երրորդ կողմին վերապահված պաշտոնեական լիազորությունն իրականացնելու համար, ում տրամադրվել են տվյալներ, կամ
- զ) մշակումն անհրաժեշտ է վերահսկող սուբյեկտի կամ այն երրորդ կողմի օրինական շահերի հետապնդման համար, ում տրամադրվել են տվյալներ՝ բացառությամբ, երբ այդ շահերին գերակայում են տվյալների սուբյեկտի հիմնարար իրավունքներով ու ազատություններով պայմանավորված շահերը, որոնց համար պահանջվում է պաշտպանություն 1(1) հոդվածի ներքո:

**Մշակման հատուկ տարատեսակները**

*Հոդված 8*

**Հատուկ տարատեսակի տվյալների մշակումը**

1. Անդամ պետությունները պետք է արգելեն ռասայական կամ էթնիկ ծագում, քաղաքական հայացքներ, կրոնական կամ փիլիսոփայական համոզմունքներ, արհեստակցական միության անդամություն վեր հանող անհատական տվյալների և անհատի առողջության կամ սեռական կյանքին վերաբերող տվյալների մշակումը:

2. Առաջին պարբերությունը չի կիրառվում այն դեպքերում, երբ.

- ա) տվյալների սուբյեկտը տվել է իր հստակ համաձայնությունն այդ տվյալները մշակելու համար՝ բացառությամբ, երբ անդամ պետության օրենքները նախատեսում են, որ առաջին պարբերությամբ սահմանված այդ արգելքը չի կարող վերացվել տվյալների սուբյեկտի կողմից տրված համաձայնությամբ, կամ
- բ) մշակումն անհրաժեշտ է վերահսկող սուբյեկտին աշխատանքային իրավունքի գործողության ոլորտում վերապահված պարտականությունների կատարման և որոշակի իրավունքների իրականացման համար այնքանով, որքանով ազգային օրենսդրությամբ թույլատրված է նախատեսել համարժեք երաշխիքներ, կամ
- գ) մշակումն անհրաժեշտ է տվյալների սուբյեկտի կամ որևէ այլ անձի կենսական շահերը պաշտպանելու համար, եթե տվյալների սուբյեկտը ֆիզիկապես կամ իրավաբանորեն ի վիճակի չէ տալու իր համաձայնությունը, կամ
- դ) մշակումն իրականացվում է որևէ հիմնադրամի, միավորման կամ շահույթ չհետապնդող որևէ այլ՝ քաղաքական, փիլիսոփայական, կրոնական կամ արհմիութենական նպատակներ ունեցող մարմնի կողմից՝ պատշաճ երաշխիքներով ապահովված իրավաչափ գործողությունների իրականացման ընթացքում՝ պայմանով, որ մշակումը վերաբերի բացառապես այդ մարմնի անդամներին կամ դրա հետ մշտական կապ պահպանող անձանց՝ դրա կողմից հետապնդվող նպատակների առնչությամբ, և որ տվյալներն առանց տվյալների սուբյեկտի համաձայնության չտրամադրվեն երրորդ կողմին, կամ

ե) մշակումը վերաբերում է այն տվյալներին, որոնք տվյալների սուբյեկտի կողմից բացահայտ հանրային են դարձվել, կամ անհրաժեշտ է օրինական պահանջներ նախատեսելու, իրականացնելու կամ պաշտպանելու համար:

3. Առաջին պարբերությունը չի կիրառվում, երբ տվյալների մշակումը պահանջվում է կանխարգելիչ բժշկության, բժշկական ախտորոշման, հիվանդների խնամքի կամ բուժման կամ առողջապահական ծառայությունների համակարգման համար, և երբ այդ տվյալները մշակվում են առողջապահական ոլորտի մասնագետի կողմից՝ ազգային իրավունքի կամ ազգային իրավասու մարմինների կողմից սահմանված կանոնների ներքո՝ ի կատարումն մասնագիտական գաղտնիության պահպանման պարտավորության, կամ մեկ այլ անձի կողմից, ում վրա դրված է համարժեք գաղտնիություն պահպանելու պարտավորություն:

4. Անդամ պետությունները կարող են, պատշաճ երաշխիքների վերաբերյալ դրույթի համաձայն, էական հանրային շահի պաշտպանության հիմքերով ազգային իրավունքով կամ վերահսկիչ մարմնի որոշմամբ սահմանել բացառություններ՝ ի լրումն այն բացառությունների, որոնք նախատեսված են 2-րդ պարբերությամբ:

5. Իրավախախտումներին, դատվածությանը կամ անվտանգության միջոցներին վերաբերող տվյալների մշակումը կարող է իրականացվել միայն համապատասխան պետական մարմնի հսկողության ներքո կամ, ազգային իրավունքում որոշակի պատշաճ երաշխիքների առկայության դեպքում՝ համաձայն անդամ պետությունների կողմից տրված՝ շեղում կատարելու հնարավորությանը՝ որոշակի պատշաճ երաշխիքներ նախատեսող ազգային դրույթների ներքո: Այդուհանդերձ, դատվածության վերաբերյալ ամբողջական գրանցամատյան կարելի է վարել միայն համապատասխան պետական մարմնի հսկողության ներքո:

Անամ պետությունը կարող է նախատեսել, որ վարչական պատասխանատվության միջոցներին կամ քաղաքացիական գործերով վճիռներին վերաբերող տվյալները նույնպես մշակվեն համապատասխան պետական մարմնի հսկողության ներքո:

6. Չորրորդ և հինգերորդ պարբերություններով նախատեսված՝ 1-ին պարբերությունից կատարվող շեղումների մասին պետք է տեղեկացնել Հանձնաժողովին:

7. Անդամ պետությունները սահմանում են այն պայմանները, որոնց ներքո կարելի է մշակել ազգային նույնականացման համարը կամ ցանկացած այլ՝ ընդհանուր կիրառություն ունեցող նույնականացման միջոց:

## Հոդված 9

### **Անհատական տվյալների մշակումը և արտահայտվելու ազատությունը**

Անդամ պետությունները սահմանում են սույն Գլխի, Գլուխ IV-ի և Գլուխ VI-ի դրույթներից բացառություններ կամ շեղումներ՝ բացառապես լրագրության կամ գեղարվեստական կամ գրական վերարտադրության նպատակներով իրականացվող անհատական տվյալների մշակման համար, միայն եթե դա անհրաժեշտ է գաղտնիության իրավունքը՝ արտահայտվելու ազատությունը կարգավորող կանոններին համապատասխանեցնելու համար:

## ԲԱԺԻՆ IV

### **Տվյալների սուբյեկտին տրամադրվելիք տեղեկատվությունը**

## Հոդված 10

### **Տվյալների սուբյեկտից տվյալներ հավաքելու դեպքում տրամադրվող տեղեկությունները**

Անդամ պետությունները նախատեսում են, որ վերահսկող սուբյեկտը կամ նրա ներկայացուցիչը պետք է նշեն որևէ տվյալների սուբյեկտի, որից հավաքվում են իրենց վերաբերող տվյալներն առնվազն ստորև նշված տեղեկատվությամբ՝ բացառությամբ, երբ նրանք արդեն տիրապետում են այն .

- ա) առկայության դեպքում՝ վերահսկող սուբյեկտի և նրա ներկայացուցչի ինքնությունը,
- բ) տվյալների մշակման այն նպատակները, որոնց համար տվյալները նախատեսված են,
- գ) ցանկացած այլ տեղեկատվություն, ինչպես օրինակ՝
  - տվյալներ ստացողները կամ ստացողների խմբերը,
  - հարցերին տրվող պատասխանների պարտադիր կամ կամավոր բնույթը ինչպես նաև պատասխան չտրամադրելու հնարավոր հետևանքները,
  - իրենց վերաբերող տվյալների մատչելիության և դրանցում ուղղում կատարելու իրավունքի առկայությունը,

այնքանով, որքանով այդպիսի լրացուցիչ տեղեկատվությունն անհրաժեշտ է տվյալների սուբյեկտի առնչությամբ արդար մշակում երաշխավորելու համար՝ հաշվի

առնելով որոշակի այնպիսի հանգամանքներ, որոնցում այդ տվյալները հավաքվում են:

### *Հոդված 11*

#### **Տվյալների սուբյեկտից տվյալներ ձեռք չբերելու դեպքում տրամադրվող տեղեկությունները**

1. Այն դեպքերում, երբ տվյալներն անմիջապես ձեռք չեն բերվում տվյալների սուբյեկտից, անդամ պետությունները սահմանում են, որ վերահսկող սուբյեկտը կամ նրա ներկայացուցիչը պետք է անհատական տվյալների գրառումը ձեռնարկելիս կամ, եթե նախատեսված է դրանք երրորդ կողմին տրամադրելու հնարավորություն, ոչ ուշ քան տվյալներն անձանց առաջին անգամ փոխանցելու ժամանակ տվյալների սուբյեկտին պարտադիր տրամադրեն առնվազն հետևյալ տեղեկությունները՝ բացառությամբ, երբ նա արդեն տիրապետում է դրանք՝

ա) առկայության դեպքում՝ վերահսկող սուբյեկտի և նրա ներկայացուցչի ինքնությունը,

բ) մշակման նպատակները,

գ) լրացուցիչ այլ տեղեկություններ, ինչպես օրինակ՝

– համապատասխան տվյալների տարատեսակը,

– ստացողները կամ ստացողների կատեգորիաները,

– իրեն վերաբերող տվյալների մատչելիության իրավունքի և դրանցում ուղղում կատարելու իրավունքի առկայությունը,

այնքանով, որքանով այդպիսի լրացուցիչ տեղեկատվությունն անհրաժեշտ է տվյալների սուբյեկտի առնչությամբ արդար մշակում երաշխավորելու համար՝ հաշվի առնելով որոշակի այնպիսի հանգամանքներ, որոնցում դրանք մշակվում են:

2. Առաջին պարբերության պահանջները չեն կիրառվում, եթե, հատկապես վիճակագրական նպատակներով իրականացվող մշակման կամ էլ պատմական կամ գիտական հետազոտության իրականացման նպատակներից ելնելով, այդպիսի տեղեկատվության տրամադրումը անհնար է կամ ներառում է անհամաչափ միջոցառումներ կամ եթե տվյալների գրառումը կամ տրամադրումն ուղղակիորեն նախատեսված է օրենքով: Այդ դեպքերում, անդամ պետությունները պետք է նախատեսեն պատշաճ երաշխիքներ:



**Տվյալների սուբյեկտի՝ տվյալների մատչելիության իրավունքը**

*Հոդված 12*

**Մատչելիության իրավունքը**

Անդամ պետությունները երաշխավորում են, որ յուրաքանչյուր տվյալների սուբյեկտ իրավունք ունենա վերահսկող սուբյեկտից ձեռք բերել՝

- ա) առանց խոչընդոտի, ողջամիտ ժամանակահատվածներում և առանց ծայրահեղ ուշացման կամ ծախսերի.
  - հաստատում այն մասին, թե արդյո՞ք իրեն վերաբերող տվյալները մշակվում են, թե՞ ոչ և տեղեկատվություն առնվազն մշակման նպատակների, տվյալների տարատեսակների և այն ստացողների կամ ստացողների կատեգորիաների մասին, ում տրամադրվում են տվյալները,
  - իրեն ուղղված հաղորդում՝ մշակման մեջ գտնվող տվյալների և դրանց աղբյուրների մասին ցանկացած հասանելի տեղեկատվության հասկանալի եղանակով ,
  - իրեն վերաբերող տվյալների՝ ցանկացած ավտոմատ մշակման մեջ ներդրված տրամաբանության վերաբերյալ իմացություն՝ առնվազն 15(1) հոդվածով նախատեսված ավտոմատացված որոշումների դեպքում,
- բ) հարկ եղած դեպքում՝ այն տվյալների ուղղումը, ջնջումը կամ արգելափակումը, որոնց մշակումը չի համապատասխանում սույն Հրահանգի դրույթներին, մասնավորապես՝ տվյալների՝ թերի կամ ոչ ճշգրիտ լինելու պատճառով.
- գ) երրորդ կողմին, որին տրամադրվել են տվյալները, արված ծանուցումը ցանկացած ուղղման, ջնջման կամ արգելափակման մասին, որը կատարվել է (բ) կետին համապատասխան, եթե դա անհնար չէ կամ չի ներառում անհամաչափ միջոցառումներ:

**Բացառություններ և սահմանափակումներ**

*Հոդված 13*

**Բացառություններ և սահմանափակումներ**

1. Անդամ պետությունները կարող են ընդունել օրենսդրական միջոցներ 6(1), 10-րդ, 11(1), 12-րդ և 21-րդ հոդվածներով նախատեսված պարտականությունների և իրավունքների շրջանակը սահմանափակելու համար, եթե այդպիսի սահմանափակումն անհրաժեշտ միջոց է երաշխավորելու համար՝

- ա) ազգային անվտանգությունը,
- բ) պաշտպանությունը,
- գ) հանրային անվտանգությունը,
- դ) հանցագործությունների կամ կարգավորվող մասնագիտություններում էթիկայի կանոնների խախտման դեպքերի կանխումը, քննությունը, հայտնաբերումը և հետապնդումը,
- ե) որևէ անդամ պետության կամ Եվրոպական միության կարևոր տնտեսական կամ ֆինանսական շահերը, ներառյալ՝ արժույթային, բյուջետային և հարկային հարցերը,
- զ) դիտանցումը, տեսչական ստուգումը կամ կարգավորիչ գործառույթը, որը նույնիսկ հազվադեպ կապված է պաշտոնեական լիազորությունների իրականացման հետ՝ (գ), (դ) և (ե) կետերով նախատեսված,
- է) տվյալների սուբյեկտի կամ այլոց իրավունքների և ազատությունների պաշտպանությունը:

2. Համապատասխան իրավական երաշխիքների համաձայն, մասնավորապես, եթե տվյալները չեն օգտագործվում միջոցներ ձեռնարկելու կամ որոշումներ ընդունելու համար, որոնք վերաբերում են ցանկացած առանձին անհատին, ապա, տվյալների սուբյեկտի գաղտնիության իրավունքի խախտման ռիսկի բացակայության դեպքում, անդամ պետությունը կարող է օրենսդրական միջոցներով սահմանափակել 12-րդ հոդվածով նախատեսված իրավունքները, եթե տվյալները մշակվում են բացառապես գիտական հետազոտության նպատակների համար կամ պահվում են անձնական թերթիկում այնպիսի

ժամկետով, որը չի գերազանցում բացառապես վիճակագրություն կազմելու նպատակի համար անհրաժեշտ ժամանակահատվածը:

## **ԲԱԺԻՆ VII**

### **Տվյալների սուբյեկտի՝ առարկելու իրավունքը**

#### *Հոդված 14*

### **Տվյալների սուբյեկտի՝ առարկելու իրավունքը**

Անդամ պետությունները տվյալների սուբյեկտին իրավունք են վերապահում՝

- ա) առնվազն 7(ե) և (զ) հոդվածով նախատեսված դեպքերում, ցանկացած ժամանակ իր առանձնահատուկ վիճակին վերաբերող պարտադիր օրինական հիմքերով առարկել իրեն վերաբերող տվյալների մշակման դեմ, եթե ազգային օրենսդրությամբ այլ բան նախատեսված չէ: Հիմնավորված առարկության առկայության դեպքում, վերահսկող սուբյեկտի նախաձեռնած մշակումն այլևս չի կարող ներառել այդ տվյալները:
- բ) պահանջի առկայության դեպքում և անվճար հիմունքներով առարկել իրեն վերաբերող անհատական տվյալների մշակման դեմ, որոնք վերահսկող սուբյեկտի կողմից նախատեսվում են մշակվել ուղղակի շուկայահանման նպատակներով, կամ էլ տեղեկացվել նախքան առաջին անգամ անհատական տվյալները երրորդ կողմին տրամադրելը կամ նրա անունից օգտագործելը ուղղակի շուկայահանման նպատակներով, ինչպես նաև անվճար հիմունքներով ուղղակիորեն առարկելու տվյալների նման տրամադրման կամ օգտագործման դեմ:

Անդամ պետությունները ձեռնարկում են անհրաժեշտ միջոցներ՝ ապահովելու համար, որ տվյալների սուբյեկտները իրազեկ լինեն (բ) կետի առաջին պարբերությամբ նախատեսված իրավունքի առկայության մասին:

#### *Հոդված 15*

### **Ավտոմատացված անհատական որոշումներ**

1. Անդամ պետությունները յուրաքանչյուր անձի իրավունք են վերապահում, որպեսզի նրանց վրա չտարածվի այնպիսի որոշում, որն իրավական հետևանքներ է առաջացնում նրա

համար կամ զգալի ազդեցություն է ունենում նրա վրա և որը հիմնվում է բացառապես տվյալների ավտոմատ մշակման վրա, որի նպատակն է գնահատել իրեն վերաբերող որոշակի անձնական բնույթի հարցեր, ինչպիսիք են՝ նրա աշխատանքի արդյունավետությունը, վճարունակությունը, հուսալիությունը, վարքագիծը և այլն:

2. Սույն Հրահանգի այլ հոդվածների համաձայն, անդամ պետությունները սահմանում են, որ անձի վրա կարող է չտարածվել առաջին պարբերությամբ նախատեսված տեսակի որոշումը, եթե այդ որոշումը.

- ա) ընդունվում է պայմանագրի կնքման կամ կատարման ժամանակ՝ պայմանով, որ տվյալների սուբյեկտի կողմից ներկայացված՝ պայմանագիրը կնքելու կամ կատարելու պահանջը բավարարված չէ կամ առկա են իր օրինական շահերը երաշխավորելու պատշաճ միջոցներ, ինչպիսիք են այնպիսի կարգավորումները, որոնք նրան թույլ են տալիս ներկայացնել իր տեսակետը, կամ
- բ) թույլատրված է օրենքով, որը նույնպես սահմանում է տվյալների սուբյեկտի օրինական շահերի երաշխավորման միջոցներ:

## **ԲԱԺԻՆ VIII**

### **Մշակման գաղտնիությունը և ապահովությունը**

#### *Հոդված 16*

#### **Մշակման գաղտնիությունը**

Վերահսկող սուբյեկտի կամ մշակողի հսկողության տակ գործող ցանկացած անձ, այդ թվում՝ ինքնին մշակողը, որի համար անհատական տվյալները մատչելի են, չպետք է դրանք մշակի բացառապես վերահսկող սուբյեկտից ստացված ցուցումների հիման վրա, եթե դա նրանից չի պահանջվում օրենքի ուժով:

#### *Հոդված 17*

#### **Մշակման ապահովությունը**

1. Անդամ պետությունները սահմանում են, որ վերահսկող սուբյեկտը պետք է ձեռնարկի պատշաճ տեխնիկական և կազմակերպչական միջոցներ՝ անհատական տվյալները

պատահական կամ չթույլատրված ոչնչացումից կամ պատահական կորստից, փոփոխությունից, չթույլատրված տրամադրումից կամ մատչելի դարձնելուց պաշտպանելու համար, մասնավորապես, երբ մշակումը ներառում է տվյալների փոխանցում ցանցի միջոցով, ինչպես նաև մշակման մյուս բոլոր անօրինական ձևերից պաշտպանելու համար:

Հաշվի առնելով առկա տեխնոլոգիաները և դրանց իրականացման հետ կապված ծախսերը՝ այդպիսի միջոցները պետք է նախատեսեն ապահովության այնպիսի մակարդակ, որը համապատասխան կլինի պաշտպանվելիք տվյալների մշակումով և բնույթով պայմանավորված ռիսկերին:

2. Անդամ պետությունները ապահովում են, որ վերահսկող սուբյեկտն այն դեպքերում, երբ մշակումն իրականացվում է իր անունից, պետք է ընտրի այնպիսի մշակող, որը կապահովի բավարար երաշխիքներ մշակումը կարգավորող տեխնիկական ապահովության միջոցների ու կազմակերպչական միջոցների առնչությամբ, և պետք է ապահովի համապատասխանությունն այդ միջոցներին:

3. Մշակման իրականացումը մշակողի միջոցով պետք է կարգավորվի պայմանագրով կամ իրավական ակտով, որով կապ կհաստատվի մշակողի և վերահսկող սուբյեկտի միջև, և որը հատկապես կսահմանի, որ՝

- մշակողը գործում է միայն վերահսկող սուբյեկտի ցուցումների համաձայն,
- առաջին պարբերությամբ սահմանված պարտավորություններն այն անդամ պետության օրենսդրությամբ սահմանված կարգով, որի տարածքում հիմնադրվել է մշակողը, նույնպես մշակողի կողմից կատարման համար պարտադիր են:

4. Ապացույցների պահպանման նպատակներով տվյալների պաշտպանության մասին պայմանագրի կամ իրավական ակտի այն հատվածները, որոնք վերաբերում են առաջին պարբերությամբ նախատեսված միջոցներին, պետք է ներկայացված լինեն գրավոր կամ համարժեք այլ ձևով:

**Ծանուցումը**

*Հոդված 18*

**Վերահսկիչ մարմնին ծանուցելու պարտավորությունը**

1. Անդամ պետությունները սահմանում են, որ վերահսկող սուբյեկտը կամ, առկայության դեպքում, նրա ներկայացուցիչը պետք է ծանուցեն 28-րդ հոդվածում նշված վերահսկիչ մարմնին՝ նախքան որևէ ամբողջական կամ մասնակի մշակման գործողություն կամ մի շարք այդպիսի գործողություններ իրականացնելը, որոնք ուղղված են մեկ միասնական նպատակի կամ մի քանի հարակից նպատակների:

2. Անդամ պետությունները կարող են նախատեսել ծանուցման պարզեցված ընթացակարգ կամ բացառություններ դրանից հետևյալ դեպքերում և հետևյալ պայմաններում.

- հաշվի առնելով մշակվելիք տվյալները՝ այնպիսի տարատեսակի մշակման գործողությունները, որոնք բացասաբար չեն անդրադառնում տվյալների սուբյեկտի իրավունքների ու ազատությունների վրա, սահմանում են մշակման նպատակները, մշակման մեջ գտնվող տվյալները կամ տվյալների տարատեսակները, ստացողներին կամ ստացողների կատեգորիաներին, որոնց պետք է տրամադրվեն տվյալները, ինչպես նաև տվյալների պահպանման ժամկետները,
- վերահսկող սուբյեկտը, իր կարգավորող ազգային իրավունքի համաձայն, նշանակում է անհատական տվյալների պաշտպանության գծով պաշտոնյա, ով, մասնավորապես, պատասխանատու է՝
- սույն Հրահանգի համաձայն ընդունված ազգային դրույթների ներքին կիրառումն անկախ եղանակով ապահովելու համար,
- վերահսկող սուբյեկտի կողմից իրականացված մշակման գործողությունների մասին գրանցամատյանի վարումը, որը ներառում է 21(2) հոդվածով նախատեսված տեղեկատվական միավորները,
- տվյալների սուբյեկտի իրավունքների և ազատությունների վրա մշակման գործողությունների բացասաբար չանդրադառնալն ապահովելու համար:

3. Անդամ պետությունները կարող են սահմանել, որ առաջին պարբերությունը չկիրառվի այնպիսի մշակման նկատմամբ, որի միակ նպատակը գրանցամատյան վարելն է, որը,

օրենքների և կանոնակարգերի համաձայն, նպատակ ունի տեղեկություններ տրամադրել հանրությանը և որը ազատ է խորհրդակցության համար ընդհանուր առմամբ հանրության կամ օրինական շահ հետապնդող ցանկացած անձի կողմից:

4. Անդամ պետությունները կարող են նախատեսել բացառություններ ծանուցման պարտավորությունից կամ սահմանել ծանուցման պարզեցված ընթացակարգ՝ 8(2)(դ) հոդվածով նախատեսված դեպքերում:

5. Անդամ պետությունները կարող են սահմանել, որ անհատական տվյալներ ներառող՝ որոշակի կամ ոչ ավտոմատ մշակման գործողությունների մասին պետք է ծանուցել, կամ կարող են նախատեսել, որ մշակման այդ գործողությունների վրա տարածվի ծանուցման պարզեցված ընթացակարգ:

#### *Հոդված 19*

#### **Ծանուցման բովանդակությունը**

1. Անդամ պետությունները սահմանում են այն տեղեկատվությունը, որը պետք է ներկայացվի ծանուցման մեջ: Այն պետք է առնվազն ներառի՝

- ա) վերահսկող սուբյեկտի և, առկայության դեպքում՝ նրա ներկայացուցչի անվանումը (անունը) և հասցեն,
- բ) մշակման նպատակը կամ նպատակները,
- գ) տվյալների սուբյեկտի կատեգորիայի կամ կատեգորիաների ինչպես նաև նրանց վերաբերող տվյալների կամ տվյալների տարատեսակի նկարագրությունը,
- դ) այն ստացողները կամ ստացողների կատեգորիաները, որոնց կարող են տրամադրվել տվյալներ,
- ե) տվյալների ենթադրյալ փոխանցումները երրորդ երկրներ,
- զ) ընդհանուր նկարագրություն, որը թույլ է տալիս կատարելու՝ 17-րդ հոդվածի համաձայն ձեռնարկված միջոցների նպատակահարմարության նախնական գնահատում՝ մշակման ապահովությունն ապահովելու համար:

2. Անդամ պետությունները սահմանում են այնպիսի ընթացակարգեր, որոնց համաձայն առաջին պարբերությամբ նախատեսված տեղեկատվության վրա բացասաբար անդրադարձող ցանկացած փոփոխության մասին պետք է ծանուցել վերահսկիչ մարմին:

#### *Հոդված 20*

##### **Նախապես ստուգելը**

1. Անդամ պետությունները որոշում են մշակման գործողությունների՝ տվյալների սուբյեկտների իրավունքների և ազատությունների համար հատուկ ռիսկեր ներկայացնելու հնարավորությունը և ստուգում, որ մշակման այդ գործողություններն ուսումնասիրվեն նախքան դրանք իրականացնելը:

2. Այդ նախնական ստուգումները պետք է իրականացվեն վերահսկիչ մարմնի կողմից՝ վերահսկող սուբյեկտից կամ տվյալների պաշտպանության գծով պաշտոնյայից ծանուցում ստանալուց հետո, որոնք, կասկածի առկայության դեպքում, պետք է խորհրդակցեն վերահսկիչ մարմնի հետ:

3. Անդամ պետությունները կարող են նման ստուգումներ կատարել նաև կամ ազգային խորհրդարանի կողմից ընդունվող միջոցի կամ էլ այդպիսի օրենսդրական միջոցի վրա հիմնված միջոցի նախապատրաստման համատեքստում, որոնք սահմանում են մշակման բնույթը և նախատեսում պատշաճ երաշխիքներ:

#### *Հոդված 21*

##### **Մշակման գործողությունների հրապարակումը**

1. Անդամ պետությունները պետք է միջոցներ ձեռնարկեն ապահովելու համար, որ մշակման գործողությունները հրապարակվեն:

2. Անդամ պետությունները սահմանում են, որ մշակման այն գործողությունների վերաբերյալ, որոնց մասին ծանուցվում է 18-րդ հոդվածի համաձայն, գրանցամատյանի վարումն իրականացվում է վերահսկիչ մարմնի կողմից:

Գրանցամատյանը պետք է առնվազն ներառի այն տեղեկությունները, որոնք թվարկված են 19(1)(ա)–ից (ե) հոդվածում:



Ցանկացած անձ կարող է զննել գրանցամատյանը:

3. Անդամ պետությունները կարող են ծանուցման ոչ ենթակա մշակման գործողությունների առնչությամբ նախատեսել, որ վերահսկող սուբյեկտը կամ անդամ պետության կողմից նշանակված մեկ այլ մարմին ցանկացած անձի պահանջով տրամադրի առնվազն 19(1)(ա)–ից (ե) հոդվածում նշված տեղեկատվությունը՝ պատշաճ ձևով:

Անդամ պետությունները կարող են սահմանել, որ այդ դրույթը չկիրառվի մշակման նկատմամբ, որի միակ նպատակը գրանցամատյան վարելն է, որը, օրենքների կամ կանոնակարգերի համաձայն, նպատակ ունի տեղեկատվություն տրամադրել հանրությանը և որը ազատ է խորհրդակցության համար ընդհանուր առմամբ հանրության կամ ցանկացած անձի կողմից, ով կարող է հիմնավորել իր օրինական շահը:

### ԳԼՈՒԽ III

## **Դատական պաշտպանության միջոցները, պատասխանատվությունը և պատժամիջոցները**

### *Հոդված 22*

#### **Դատական պաշտպանության միջոցները**

Չհակասելով վարչաիրավական պաշտպանության որևէ միջոցի, որի համար կարող է դրույթ նախատեսվել՝ ընդ որում՝ 28-րդ հոդվածով նախատեսված վերահսկիչ մարմնում և նախքան դատական մարմին դիմելը, անդամ պետությունները նախատեսում են յուրաքանչյուր անձի՝ դատական պաշտպանության միջոցներից օգտվելու իրավունքը՝ տվյալ մշակման նկատմամբ կիրառվող ազգային իրավունքով նրա համար երաշխավորված իրավունքների ցանկացած խախտման համար:

### *Հոդված 23*

#### **Պատասխանատվությունը**

1. Անդամ պետությունները սահմանում են, որ ցանկացած անձ, ով վնաս է կրել մշակման անօրինական գործողությունից կամ այնպիսի գործողությունից, որը հակասում է սույն

Հրահանգի համաձայն ընդունված ազգային դրույթներին, իրավունք ունի վերահսկող սուբյեկտից ստանալու փոխհատուցում՝ պատճառված ցանկացած վնասի դիմաց:

2. Վերահսկող սուբյեկտը կարող է ամբողջությամբ կամ մասամբ ազատվել այս պատասխանատվությունից, եթե ապացուցի, որ ինքը պատասխանատու չէ վնասին հանգեցնող դեպքի համար:

#### *Հոդված 24*

### **Պատժամիջոցները**

Անդամ պետությունները պետք է ընդունեն պատշաճ միջոցներ՝ սույն Հրահանգի դրույթների ամբողջական կիրարկումն ապահովելու համար, և պետք է, մասնավորապես, սահմանեն սույն Հրահանգի համաձայն ընդունված դրույթների խախտման դեպքում կիրառվող պատժամիջոցները:

#### **ԳԼՈՒԽ IV**

### **ԱՆՀԱՏԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՓՈԽԱՆՑՈՒՄԸ ԵՐՐՈՐԴ ԵՐԿՐՆԵՐ**

#### *Հոդված 25*

### **Սկզբունքները**

1. Անդամ պետությունները սահմանում են, որ անհատական այնպիսի տվյալների փոխանցումը երրորդ երկիր, որոնք գտնվում են մշակման մեջ կամ նախատեսված են փոխանցումից հետո մշակվելու համար, կարող է տեղի ունենալ միայն այն դեպքում, երբ, չհակասելով սույն Հրահանգի մյուս դրույթների համաձայն ընդունված ազգային դրույթների հետ համապատասխանությանը, տվյալ երրորդ երկիրն ապահովում է պաշտպանության համարժեք մակարդակ:

2. Երրորդ երկրի կողմից տրամադրվող պաշտպանության մակարդակի համարժեքությունը գնահատվում է՝ տվյալների փոխանցման գործողության կամ տվյալների փոխանցման մի շարք գործողությունների հետ կապված բոլոր հանգամանքների լույսի ներքո. առանձին ուշադրություն պետք է հատկացվի տվյալների բնույթին, ենթադրյալ մշակման գործողության կամ գործողությունների նպատակին և տևողությանը, ծագման երկրին և նպատակակետ

երկրին, տվյալ երրորդ երկրում գործող իրավունքի նորմերին՝ ինչպես ընդհանուր, այնպես էլ՝ ոլորտային, և այդ երկրում պահպանված մասնագիտական կանոններին ու անվտանգության միջոցառումներին:

3. Անդամ պետությունները և Հանձնաժողովը տեղեկացնում են միմյանց այն դեպքերի մասին, երբ նրանք համարում են, որ երրորդ երկիրը չի ապահովում պաշտպանության համարժեք մակարդակ՝ 2-րդ պարբերության իմաստով:

4. Եթե Հանձնաժողովը, 31(2) հոդվածով սահմանված ընթացակարգի համաձայն, գտնում է, որ երրորդ երկիրը չի ապահովում պաշտպանության համարժեք մակարդակ՝ սույն Հոդվածի 2-րդ պարբերության իմաստով, ապա անդամ պետությունները պետք է ձեռնարկեն միջոցներ, որոնք անհրաժեշտ են՝ նմանատիպ տվյալների ցանկացած փոխանցումը տվյալ երրորդ երկիր կանխելու համար:

5. Հանձնաժողովը պետք է ճիշտ ժամանակ սկսի բանակցություններ՝ 4-րդ պարբերության համաձայն կայացված դիրքորոշումից բխող իրավիճակը շտկելու համար:

6. Հանձնաժողովը կարող է, 31(2) հոդվածով սահմանված ընթացակարգի համաձայն, եզրակացնել, որ երրորդ երկիրը սույն Հոդվածի 2-րդ պարբերության իմաստով ապահովում է պաշտպանության համարժեք մակարդակ՝ իր ազգային իրավունքի կամ ստանձնած միջազգային պարտավորությունների ուժով, մասնավորապես՝ 5-րդ պարբերությամբ նախատեսված բանակցությունների հաստատմամբ:

Անդամ պետությունները ձեռնարկում են միջոցներ, որոնք անհրաժեշտ են Հանձնաժողովի որոշման հետ համապատասխանելու համար:

## *Հոդված 26*

### **Շեղումները**

1. Շեղում կատարելով 25-րդ հոդվածից և բացառությամբ առանձին դեպքերը կարգավորող ազգային իրավունքով նախատեսված դեպքերի՝ անդամ պետությունները նախատեսում են, որ անհատական տվյալների փոխանցումը կամ մի շարք փոխանցումներն այնպիսի երրորդ երկիր, որը 25(2) հոդվածի իմաստով չի ապահովում պաշտպանության համարժեք մակարդակ, կարող են կատարվել՝ պայմանով, որ՝

ա) տվյալների սուբյեկտը միանշանակ տվել է իր համաձայնությունը ենթադրյալ փոխանցման համար, կամ

բ) փոխանցումն անհրաժեշտ է տվյալների սուբյեկտի և վերահսկող սուբյեկտի միջև կնքված պայմանագրի կատարման կամ նախապայմանագրային միջոցների կիրարկման համար՝ ի պատասխան տվյալների սուբյեկտի ներկայացրած պահանջի, կամ

գ) փոխանցումն անհրաժեշտ է վերահսկող սուբյեկտի և երրորդ կողմի միջև՝ տվյալների սուբյեկտի շահերից ելնելով կնքված պայմանագրի կնքման կամ կատարման համար, կամ

դ) փոխանցումն անհրաժեշտ է կամ պահանջվում է օրենքի ուժով՝ ելնելով կարևոր հանրային շահերից, կամ էլ՝ իրավական պահանջներ սահմանելու, կատարելու կամ պաշտպանելու համար, կամ

ե) փոխանցումն անհրաժեշտ է՝ տվյալների սուբյեկտների կենսական շահերը պաշտպանելու համար, կամ

զ) փոխանցումը կատարվում է այնպիսի գրանցամատյանից, որը, օրենքների կամ կանոնակարգերի համաձայն, նախատեսված է հանրությանը տեղեկություններ տրամադրելու համար, և որն ազատ է խորհրդակցության համար ընդհանուր առմամբ հանրության կամ կամ ցանկացած անձի կողմից, ով կարող է հիմնավորել իր օրինական շահը, այնքանով, որքանով խորհրդակցության համար օրենքով սահմանված պայմանները բավարարվում են առանձին դեպքի կապակցությամբ:

2. Չհակասելով 1-ին պարբերությանը՝ անդամ պետությունը կարող է թույլատրել կատարելու անհատական տվյալների փոխանցում կամ մի շարք փոխանցումներ այնպիսի երրորդ երկիր, որը 25(2) հոդվածի իմաստով չի ապահովում պաշտպանության համարժեք մակարդակ, եթե վերահսկող սուբյեկտը առաջադրում է համապատասխան երաշխիքներ՝ անհատների գաղտնիության իրավունքի և հիմնարար իրավունքների ու ազատությունների պաշտպանության առնչությամբ ինչպես նաև համապատասխան իրավունքների իրականացման մասով. նման երաշխիքները կարող են, մասնավորապես, բխել համապատասխան պայմանագրային դրույթներից:

3. Անդամ պետությունը տեղեկացնում է Հանձնաժողովին և մյուս անդամ պետություններին 2-րդ պարբերության համաձայն տրամադրված թույլտվությունների մասին:

Եթե անդամ պետությունը կամ Հանձնաժողովը առարկում է արդարացված հիմքերով, որոնք ներառում են գաղտնիության իրավունքի և հիմնարար իրավունքների ու

ազատությունների պաշտպանությունը, ապա Հանձնաժողովը ձեռնարկում է համապատասխան միջոցներ՝ 31(2) հոդվածով սահմանված ընթացակարգին համապատասխան:

Անդամ պետությունները ձեռնարկում են անհրաժեշտ միջոցներ՝ Հանձնաժողովի որոշումը կատարելու համար:

4. Եթե Հանձնաժողովը, 31(2) հոդվածով նախատեսված ընթացակարգի համաձայն, որոշում է, որ պայմանագրի որոշ տիպային դրույթներով ապահովվում են 2-րդ պարբերության համաձայն պահանջվող բավարար երաշխիքներ, ապա անդամ պետությունները ձեռնարկում են անհրաժեշտ միջոցներ՝ Հանձնաժողովի որոշումը կատարելու համար:

## ԳԼՈՒԽ V

### ՎԱՐՔԱԳԾԻ ԿԱՆՈՆԱԳՐՔԵՐ

#### Հոդված 27

1. Անդամ պետությունները և Հանձնաժողովը խրախուսում են՝ անդամ պետությունների կողմից սույն Հրահանգի համաձայն ընդունված ազգային դրույթների պատշաճ իրականացմանը նպաստելու համար նախատեսված վարքագծի կանոնագրքեր՝ հաշվի առնելով տարբեր ոլորտների որոշակի առանձնահատկություններ:

2. Անդամ պետությունները պետք է սահմանեն դրույթ առևտրային միությունների և վերահսկող սուբյեկտների մյուս կատեգորիաները ներկայացնող այն մարմինների համար, որոնք կազմել են վարքագծի ազգային կանոնագրքեր կամ մտադիր են փոփոխել կամ լրացնել գործող ազգային կանոնագրքերը, որպեսզի հնարավոր լինի դրանք ներկայացնել ազգային մարմին՝ եզրակացություն ստանալու նպատակով:

Անդամ պետությունները պետք է այդ մարմնի համար նախատեսեն դրույթ՝ հավաստելու, այլ հարցերի հետ մեկտեղ, թե արդյո՞ք դրան ներկայացված նախագծերը համապատասխանում են սույն Հրահանգի համաձայն ընդունված ազգային դրույթներին: Համապատասխանության առկայության դեպքում, այդ մարմինն ընդունում է տվյալների սուբյեկտների կամ նրանց ներկայացուցիչների տեսակետները:

3. Համայնքի կանոնագրքերի նախագծերը և Համայնքի գործող կանոնագրքերի փոփոխությունները կամ լրացումները կարող են ներկայացվել 29-րդ հոդվածով

նախատեսված աշխատանքային խմբին: Այդ աշխատանքային խումբը պետք է որոշի, այլ հարցերի հետ մեկտեղ, թե արդյո՞ք իրեն ներկայացված նախագծերը համապատասխանում են սույն Հրահանգի համաձայն ընդունված ազգային դրույթներին: Համապատասխանության առկայության դեպքում, այդ մարմինն ընդունում է տվյալների սուբյեկտների կամ նրանց ներկայացուցիչների տեսակետները: Հանձնաժողովը կարող է ապահովել աշխատանքային խմբի կողմից հաստատված կանոնագրքերի պատշաճ հրապարակայնությունը:

## ԳԼՈՒԽ VI

### **Անհատական տվյալների մշակման առնչությամբ անհատների պաշտպանության հարցերով վերահսկիչ մարմին և աշխատանքային խումբ**

#### *Հոդված 28*

#### **Վերահսկիչ մարմին**

1. Յուրաքանչյուր անդամ պետություն նախատեսում է, որ մեկ կամ մի քանի պետական մարմիններ պատասխանատու լինեն՝ անդամ պետությունների կողմից սույն Հրահանգի համաձայն ընդունված դրույթներն իր տարածքում կիրառելը դիտանցելու համար:

Այդ մարմինները գործում են լիակատար անկախության պայմաններում՝ իրենց վերապահված գործառույթներն իրականացնելիս:

2. Յուրաքանչյուր անդամ պետություն ապահովում է, որ այդ վերահսկիչ մարմինների հետ խորհրդատվություններ անցկացվեն՝ անհատական տվյալների մշակման առնչությամբ անհատների իրավունքների և ազատությունների պաշտպանության վերաբերյալ վարչական միջոցներ կամ կանոնակարգեր կազմելիս:

3. Յուրաքանչյուր մարմին, մասնավորապես, պետք է օժտված լինի՝

– հետապնդում իրականացնելու լիազորություններով, ինչպես օրինակ՝ այնպիսի տվյալների մատչելիությունն ապահովող լիազորություններով, որոնք մշակման գործողությունների առարկան են կազմում ինչպես նաև՝ իր վերահսկողական պարտականությունները կատարելու համար անհրաժեշտ տեղեկություններ հավաքելու լիազորություններով:

– միջամտելու գործող լիազորություններով, ինչպես օրինակ՝ նախքան մշակման գործողություններ իրականացնելը եզրակացություններ ներկայացնելու լիազորությամբ՝ 20-

րդ հոդվածին համապատասխան, և նման եզրակացությունների պատշաճ հրապարակման լիազորությամբ, տվյալները արգելափակելու, ջնջելու կամ ոչնչացնելու հրահանգ տալու լիազորությամբ, մշակման վրա ժամանակավոր կամ վերջնական արգելք դնելու լիազորությամբ, վերահսկող սուբյեկտին նախազգուշացնելու կամ դիտողություններ կատարելու լիազորությամբ, կամ գործն ազգային խորհրդարաններին կամ այլ քաղաքական ինստիտուտներին հասցեագրելու լիազորությամբ.

– վարույթում ներգրավվելու լիազորությամբ, եթե սույն Հրահանգի համաձայն ընդունված ազգային դրույթները խախտվել են կամ նման խախտումները դատական մարմինների ուշադրությանը ներկայացնելու լիազորությամբ:

Վերահսկիչ մարմնի որոշումները, որոնք հանգեցնում են բողոքների, կարող են բողոքարկվել դատական կարգով:

4. Յուրաքանչյուր վերահսկիչ մարմին իրականացնում է ցանկացած անձի կամ այդ անձին ներկայացնող կազմակերպության կողմից ներկայացված բողոքների լուծմանը՝ կապված անհատական տվյալների մշակման առնչությամբ իրավունքների և ազատությունների պաշտպանության հետ: Տվյալ անձը տեղեկացվում է իր բողոքի ելքի մասին:

Յուրաքանչյուր վերահսկիչ մարմին, մասնավորապես, իրականացնում է ցանկացած անձի կողմից ներկայացված՝ տվյալների մշակման օրինականությունը ստուգելուն ուղղված բողոքների լուծման, երբ կիրառվում են սույն Հրահանգի 13-րդ հոդվածի համաձայն ընդունված ազգային դրույթները: Անձը, ամեն դեպքում, տեղեկացվում է, որ ստուգումն իրականացվել է:

5. Յուրաքանչյուր վերահսկիչ մարմին իր գործունեության մասին պարբերաբար հաշվետվություն է կազմում: Հաշվետվությունը հրապարակվում է:

6. Անկախ տվյալ մշակման նկատմամբ կիրառելի ազգային իրավունքից՝ յուրաքանչյուր վերահսկիչ մարմին իրավասու է իր անդամ պետության տարածքում իրականացնել 3-րդ պարբերության համաձայն իրեն վերապահված լիազորությունները: Յուրաքանչյուր մարմնից մեկ այլ անդամ պետության մարմին կարող է պահանջել իրականացնելու սեփական լիազորությունները:

Վերահսկիչ մարմինները համագործակցում են միմյանց հետ այնքանով, որքանով անհրաժեշտ է իրենց պարտականությունները կատարելու համար, մասնավորապես, օգտակար տեղեկատվություն փոխանակելու միջոցով:

7. Անդամ պետությունները ապահովում են, որ վերահսկիչ մարմնի անդամները և աշխատակազմը նույնիսկ աշխատանքից ազատվելուց հետո մասնագիտական գաղտնիության պահպանման պարտավորություն կրեն այնպիսի գաղտնի տեղեկատվության մասով, որը մատչելի է նրանց համար:

#### *Հոդված 29*

### **Անհատական տվյալների մշակման առնչությամբ անհատների պաշտպանության հարցերով աշխատանքային խումբ**

1. Սույնով ստեղծվում է Անհատական տվյալների մշակման առնչությամբ անհատների պաշտպանության հարցերով աշխատանքային խումբը, այսուհետ՝ «աշխատանքային խումբ»:

Այն ունի խորհրդատվական կարգավիճակ և գործում է անկախ:

2. Աշխատանքային խումբը կազմված է յուրաքանչյուր անդամ պետության կողմից նշանակված վերահսկիչ մարմնի կամ մարմինների ներկայացուցչից և Համայնքի հաստատությունների և մարմինների կողմից հաստատված մարմնի կամ մարմինների ներկայացուցչից, ինչպես նաև Հանձնաժողովի ներկայացուցչից:

Աշխատանքային խմբի յուրաքանչյուր անդամ նշանակվում է այն այն հաստատության, մարմնի կամ մարմինների կողմից, որին նա ներկայացնում է: Եթե անդամ պետությունը նշանակում է մեկից ավելի վերահսկիչ մարմին, ապա նրանք պետք է առաջադրեն մեկ ընդհանուր ներկայացուցիչ: Նույն ընթացակարգը կիրառվում է Համայնքի հաստատությունների և մարմինների կողմից հաստատված մարմինների նկատմամբ:

3. Աշխատանքային խումբն իր որոշումները կայացնում է վերահսկիչ մարմինների ներկայացուցիչների ձայների պարզ մեծամասնությամբ:

4. Աշխատանքային խումբը ընտրում է իր նախագահին: Նախագահը պաշտոնավարում է երկու տարի ժամկետով: Նա կարող է վերընտրվել:

5. Աշխատանքային խմբի քարտուղարությունը ապահովվում է Հանձնաժողովի կողմից:

6. Աշխատանքային խումբը սահմանում է իր աշխատակարգը:



7. Աշխատանքային խումբը քննարկում է իր նախագահի կողմից օրակարգում բարձրացված հարցերը կամ իր սեփական նախաձեռնությամբ, կամ վերահսկիչ մարմինների ներկայացուցչի պահանջով, կամ էլ Հանձնաժողովի պահանջով:

### *Հոդված 30*

#### 1. Աշխատանքային խումբը՝

ա) ուսումնասիրում է սույն Հրահանգի համաձայն ընդունված ազգային միջոցների կիրառման վերաբերյալ հարցեր՝ նման միջոցների միասնական կիրառմանը նպաստելու համար.

բ) Հանձնաժողովին ներկայացնում է եզրակացություն՝ Համայնքում և երրորդ երկրներում առկա պաշտպանության մակարդակի վերաբերյալ.

գ) խորհրդակցում է Հանձնաժողովի հետ սույն Հրահանգում առաջարկվող ցանկացած փոփոխության, անհատական տվյալների մշակման առնչությամբ ֆիզիկական անձանց իրավունքները և ազատությունները երաշխավորելուն ուղղված լրացուցիչ կամ հատուկ միջոցների և ցանկացած այլ առաջարկվող համայնքային միջոցների շուրջ, որոնք կարող են բացասաբար անդրադառնալ այդ իրավունքների և ազատությունների վրա:

դ) եզրակացություն է տալիս Համայնքի մակարդակով կազմված վարքագծի կանոնագրքերի մասին:

2. Եթե աշխատանքային խումբը գտնում է, որ Համայնքում անհատական տվյալների մշակման առնչությամբ անձանց պաշտպանության համարժեքության վրա ազդեցություն ունեցող տարանջատումներ են առաջանում անդամ պետությունների օրենքների կամ գործելակերպերի միջև, ապա այն այդ մասին տեղեկացնում է Հանձնաժողովին:

3. Աշխատանքային խումբը կարող է իր նախաձեռնությամբ հանդես գալ առաջարկներով՝ Համայնքում անհատական տվյալների մշակման առնչությամբ անձանց պաշտպանությանը վերաբերող բոլոր հարցերի շուրջ:

4. Աշխատանքային խմբի եզրակացությունները և առաջարկները ուղարկվում են Հանձնաժողովին և 31-րդ հոդվածում նշված կոմիտեին:

5. Հանձնաժողովը տեղեկացնում է աշխատանքային խմբին իր ձեռնարկած գործողության մասին՝ ի պատասխան նրա ներկայացրած եզրակացություններին և առաջարկներին: Այդ

նույնն արվում է նաև հաշվետվության մեջ, որն այն ուղարկում է Եվրոպական պառլամենտին և Խորհրդին: Հաշվետվությունը հրապարակվում է:

6. Աշխատանքային խումը կազմում է տարեկան հաշվետվություն՝ Համայնքում և երրորդ երկրներում անհատական տվյալների մշակման առնչությամբ ֆիզիկական անձանց պաշտպանության վերաբերյալ տիրող իրավիճակի մասին, որն այն ուղարկում է Հանձնաժողովին, Եվրոպական պառլամենտին և Խորհրդին: Հաշվետվությունը հրապարակվում է:

## **ԳԼՈՒԽ VII**

### **ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԻՐԱՐԿՈՂ ՄԻՋՈՑՆԵՐ**

#### **▼M1**

#### *Հոդված 31*

1. Հանձնաժողովին աջակցում է կոմիտեն:
2. Երբ հղում է կատարվում սույն Հոդվածին, ապա կիրառվում են 1999/468/ԵՀ (5) որոշման 4-րդ և 7-րդ հոդվածները՝ հաշվի առնելով դրա 8-րդ հոդվածի դրույթները:  
1999/468/ԵՀ որոշման 4(3) հոդվածով նախատեսված ժամկետը երեք ամիս է:
3. Կոմիտեն սահմանում է իր աշխատակարգը:

#### **▼B**

### **ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

#### *Հոդված 32*

1. Անդամ պետությունները գործողության մեջ են դնում սույն Հրահանգին համապատասխանությունն ապահովելու համար անհրաժեշտ օրենքները, կանոնակարգերը և վարչական ակտերն ամենաուշը մինչև՝ դրա ընդունման ամսաթվից հաշված երեք տարվա ավարտը:

Երբ անդամ պետություններն ընդունում են այդ միջոցները, դրանք պետք է հղում պարունակեն սույն Հրահանգին կամ ուղեկցվեն նման հղումով դրանց պաշտոնական

հրապարակման ժամանակ: Նման հղում կատարելու մեթոդները սահմանվում են անդամ պետությունների կողմից:

2. Անդամ պետություններն ապահովում են, որ սույն Հրահանգի համաձայն ընդունված ազգային դրույթներն ուժի մեջ մտնելու օրն արդեն ընթացքի մեջ գտնվող տվյալների մշակումը համապատասխանեցվի այդ դրույթներին՝ այդ օրվանից հաշված երեք տարվա ընթացքում:

Շեղում կատարելով նախորդ ենթապարբերությունից՝ անդամ պետություններն ապահովում են, որ սույն Հրահանգի կիրարկման նպատակով ընդունված ազգային դրույթներն ուժի մեջ մտնելու օրն արդեն ձեռքով արխիվացման համակարգերում պահվող տվյալների մշակումը համապատասխանեցվի սույն Հրահանգի 6-րդ, 7-րդ և 8-րդ հոդվածներին՝ դրա ընդունման օրվանից հաշված 12 տարվա ընթացքում: Այնուամենայնիվ, անդամ պետությունները տվյալների սուբյեկտին նրա պահանջով և, մասնավորապես, իր մատչելիության իրավունքն իրականացնելիս, տրամադրում են՝ թերի, ոչ ճշգրիտ կամ վերահսկող սուբյեկտի կողմից հետապնդվող իրավաչափ նպատակներին չհամապատասխանող եղանակով պահվող տվյալներն ուղղելու, ջնջելու կամ արգելափակելու իրավունք:

3. Շեղում կատարելով 2-րդ պարբերությունից՝ անդամ պետությունները կարող են, պատշաճ երաշխիքների համաձայն, նախատեսել, որ բացառապես պատմական հետազոտության նպատակներով պահվող տվյալները չհամապատասխանեցվեն սույն Հրահանգի 6-րդ, 7-րդ և 8-րդ հոդվածներին:

4. Անդամ պետությունները Հանձնաժողովին են ներկայացնում ներպետական իրավունքի դրույթների տեքստը, որոնք նրանք ընդունում են սույն Հրահանգով կարգավորվող ոլորտում:

### *Հոդված 33*

Հանձնաժողովը պարբերաբար՝ սկսած ոչ ուշ, քան 32 (1) հոդվածում նշված ամսաթվից երեք տարի հետո, հաշվետվություն է ներկայացնում Խորհրդին և Եվրոպական պառլամենտին սույն Հրահանգի կիրարկման մասին՝ անհրաժեշտության դեպքում, այդ հաշվետվության կից ներկայացնելով համապատասխան փոփոխություններ կատարելու առաջարկներ: Հաշվետվությունը հրապարակվում է:

Հանձնաժողովը, մասնավորապես, ուսումնասիրում է սույն Հրահանգի կիրառումը ֆիզիկական անձանց վերաբերող տեսաձայնային տվյալների մշակման նկատմամբ և ներկայացնում է համապատասխան առաջարկներ, որոնց անհրաժեշտությունն առկա է՝ հաշվի առնելով տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի զարգացումները և տեղեկատվական հասարակության զարգացումների լույսի ներքո:

#### *Հոդված 34*

Սույն Հրահանգը հասցեագրված է անդամ պետություններին:

---

1) ՊՏ թիվ C 277, 05.11.1990թ., էջ 3 և ՊՏ թիվ C 311, 27.11.1992թ., էջ 30:

2) ՊՏ թիվ C 159, 17.06.1991թ., էջ 38:

3) Եվրոպական պառլամենտի 1992 թվականի մարտի 11-ի եզրակացություն (ՊՏ թիվ C 94, 13.04.1992 թ., էջ 198)՝ հաստատված 1993 թվականի դեկտեմբերի 2-ին (ՊՏ թիվ C 342, 20.12.1993թ., էջ 30), Խորհրդի 1995 թվականի փետրվարի 20-ի ընդհանուր դիրքորոշում (ՊՏ թիվ C 93, 13.04.1995 թ., էջ 1), Եվրոպական պառլամենտի 1995 թվականի հունիսի 15-ի որոշում (ՊՏ թիվ C 166, 03.07.1995 թ.):

4) ՊՏ թիվ L 197, 18.07.1987թ., էջ. 33:

5) Հանձնաժողովին վերապահված կիրարկման լիազորությունների իրականացման համար ընթացակարգեր սահմանող՝ Խորհրդի 1999 թվականի հունիսի 28-ի 1999/468/ԵՀ որոշում (ՊՏ L 184, 17.07.1999թ, էջ 23):